Azg Վազ

7-13 ՕԳՈՍՏՈՍ 2026 ՈՒՐԲԱԹ 026(5894)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Մեր խնդիրը չէ գերմանացի լրագրողներին ասել՝ ինչի մասին գրեն...»

1news.az-ին օգոստոսի 4-ին հարցազրույց է տվել Բեռլինում Ադրբեջանի դեսպան Նասիմի Աղաեւը: «Բաքուն եւ Բեռլինը նոր էջ բացեցին» անգլերեն զրույցը, որ դեսպանը հրապարակել է նաեւ X-ում, առավելաբար ուշադրություն է հրավիրում Ալիեւի՝ հուլիսի 20-21-ին Բեռլին այցի ժամանակ ստեղծված ադրբեջանագերմանական գործարար խորհրդի աշխատանքին, գերմանացի ներդրողների՝ «Ղարաբաղում (գրված է Karabakh) եւ Միջին միջանցքում» շահավետ հետաքրքրություններին եւ եվրոպական ԶԼՄ-ներում առկա «տեղեկատվական պատը հաղթահարելու հնարավորությանը»: Ադրբեջանի խնդիրների երեւակումն է այս զրույցը: Դեսպանն ասում է, որ «Ադրբեջանի կանաչ էներգիայի օրակարգը եւ ԳԴՀ տեխնոլոգիական, արդյունաբերական ներուժը լրացնում են իրար: Ազատագրված Ղարաբաղը (գրված է Garabagh) եւ Արեւելյան Զանգեզուրը կանաչ էներգիայի գոտի հռչակելը կարեւոր համագործակցության հնարավորություն է գերմանական ընկերությունների համար: Մեր նպատակը ոչ միայն պատրաստի տեխնոլոգիաների ձեռքբերումն է, այլ համատեղ արտադրությունը, մասնագետների վերապատրաստումը, գիտահետազոտական համագործակցությունը»:

⇨5

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Բարեգործությունը՝ օրենքից դուրս, իսկ չարագործությո՞ւնը...

Մեր երկրում օրը նոր, անհեթեթ, նույնիսկ արտառոց ծրագրերը՝ նոր, բացահայտված «կառավարությունը այդ ե՛ս եմ» հայտարարող անձի կողմից: Ճիշտ է, այդ նույն անձը դեռեւս չի հայտարարել, թե ինքը պետությունն իսկ է, սակայն նրա յուրաքանչյուր խոսքից, արտահայտությունից, պահվածքից, գլխարկից անգամ այդ միտքն է արտացոլվում, ինչին հավատում են ոչ քիչ թվով մարդիկ, քաղաքացիներ այն «տրամաբանությամբ», որ եթե նա է վարչապետը, ուրեմն նա՛ է **պետը**, ուստի եւ՝ նա **պետ**ությունն իսկ է՛: Հետեւաբար շատ լուրջ պետք է մոտենալ նրա յուրաքանչյուր մտքին, գաղափարին, ծրագրերին:

Ուրեմն մենք էլ լուրջ մոտենանք մամուլի նրա վերջին ասուլիսին, որի ընթացքում լրագրողներից մեկի հիշեցումը, թե, այնուամենայնիվ, Գագիկ Ծառուկյանը բարեգործ է ու շատերին է օգնել, հունից հանեց նրան, եթե երբեւիցե նա ունեցել է հուն: Նա պոռթկաց եւ ահեղացունց (բառը Չարենցինն է) ձայնով դատապարտեց ոչ միայն Գ. Ծառուկյանին, այլեւ մյուս բարեգործներին եւ առհասարակ բարեգործությունը, որը, նրա կարծիքով, որքան որ ինքս ընկալեցի, անարգանքն ու անտեսումն է պետականության: Բարեգործը, կարելի է եզրակացնել նրա ասածից, ձգտում է իր իսկ քաղաքական ու նյութական շահերի համար առաջ անցնել պետությունից, դառնալ պետություն պետության մեջ:

Ենթադրելի է, որ նա այդ մտքին հանգել է վերջին ընտրություններից հետո, երբ, հակառակ իր ակնկալիքներին՝ չկարողացավ հավաքել ցանկացած 67 տոկոսը ձայների, ինչի համար այժմ մեղադրում է Ծառուկյանին, հոգ չէ, որ վերջինից, ինչպես պնդում են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներն ու շատ վերլուծաբաններ, գողացել է 60 հազար ձայն եւ արգելափակել այդ կուսակցության մուտքը խորհրդարան ու բանտարկել նրա ղեկավարին:

Ու որպես քավության նոխազ եւ արդարացումն իր պարտության, վարչապետը, ներողություն՝ **պետ**ության **պետ**ը, ինչպես ժողովուրդն է ասում՝ մուռը հանում է բարեգործությունից, որը, նրա կարծիքով, ընդամենը կաշառատվություն է, որը չունի իրավունք գոյության, երբ, իր ասելով, պետությունն է, այսինքն ի՛նքն է կանգնած յուրաքանչյուր քաղաքացու մեջքին: Երնե՜կ մեզ, մեր ժողովրդին...

Ուրեմն, սովորենք բոլորս, բարեգործությունն ընդամենը գործիք ու միջոց է անհատների ձեռքին՝ տիրանալու հեղինակության, դիրքի, իշխանության: Ուրիշ ոչինչ: Հետեւաբար պետք է արգելել բոլոր նրանց, ովքեր բարեգործությամբ են հայտնի, ովքեր թե՛ քրիստոնյա, թե՛ մահմեդական, հինդու կամ այլ կրոնի պատկանող, ովքեր իրականացնում են միմյանց օգնելու, կարիքավորներին, զրկյալներին, հիվանդներին, սովյալներին, նորահաս սերունդներին օգնելու, պատսպարելու, սովորեցնելու եւ վերջապես՝ միմյանց սիրելու աստվածային պատգամն ու պատվիրանը:

Անշուշտ, ինչպես ամեն բանում, կլինեն խարդախներ, աֆերիստներ, անպարկեշտ մարդիկ, ովքեր բարեգործության անվան տակ կարող են մախինացիաներով զբաղվել, սակայն օրինազանցության առկայության պատճառով օրենքը չի կարող արգելափակվել, փակի տակ դրվել: Խելացի ու զարգացած յուրաքանչյուր պետություն կարող է եւ կիրառում է համապատասխան օրենքներ ու կանոններ՝ բարեգործությունն անխաթար պահելու, ի բարօրություն մարդկանց այն արդյունավորելու համար:

Մեր մեծ բարերարների՝ Ալեքսանդր Մանթաշյանցի, Պողոս Նուբարի, Կարապետ աղա Մելգոնյանի, Գալուստ Գյուլբենկյանի, Ալեք Մանուկյանի ու նրանց նմանների միջոցով մենք, մեր ազգը, կարողացել ենք կրկին ոտքի կանգնեցնել, կրթություն տալ, խնամել, զորացնել, պետություն ստեղծել, դպրոցներ, տաճարներ, երիտասարդական կենտրոններ, անգամ համալսարան ստեղծել, հատկապես Մեծ արհավիրքից հետո:

Արդ, ի՞նչ են շահել այդ բարեգործները՝ իշխանությո՞ւն, վարչապետական աթո՞ռ, թե՞ հարստություն եւ կամ բոլորը միասին:

Բարեգործությունը օրենքից դուրս հայտարարելն ի՛նքը հակաօրինական է, հակապետական:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ընտրությունները չե՞ն ավարտվել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անօրինանք, անկաթողիկոս 9-րդ գումարման Ազգային ժողովը ձեւավորող արտահերթ նիստի օրերն ամբողջովին գծագրեցին այն պատկերը, որը մենք ստացել ենք վերջին խորհրդարանական ընտրություններից հետո: Իշխանական քվոտաներով արդեն իսկ Աժ նախագահ (Ռուբեն Ռուբինյան), տեղակալներ (Հայկ Կոնջորյան, Վահագն Ալեքսանյան) ընտրելու քննարկումները դարձան այն երեւակիչը, որով մեզ առաջարկվում է եւս հինգ տարի դիտել նոր խորհրդարանի ընդդիմադիր՝ կարապետյանական կորպուսի եւ մի փոքր թարմացված իշխանական կուսակցության թատերականացված անվճար ռեալիթի շոուները՝թեկուզ անգամ Ռուբեն Ռուբինյանի առաջարկած, բայց քննարկումների երրորդ օրն իսկ խախտած բարեկրթության մթնոլորտում (եթե անգամ հնարավոր լինի նույնիսկ ապագայում ինչ-որ նշածողի վրա պահել բարեկիրթ աշխատելու Ռուբինյանի առաջարկը): Կպայմանավորվե՞ն արդյոք, եւ մինչ այդ այլ պայմանավորվածություններ ունեցե՞լ են արդյոք նոր ընդդիմություն ու հին իշխանությունը, միգուցե հետագա ծրագիր կա գծված:

Կառավարությունը նշանակված է, այն ամբողջությամբ հինն է՝ ԲՏԱ նախարարի փոփոխության բացառությամբ, ինչը նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանն անտեսել է կառավարութունում նոր մարդկանց տեսնելու հանրային պահանջը: Ու թե ո՞նց է հին մարդկանցով որոշակի վերանայումներ անելու ծրագրերում՝ կառավարության արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչպես որ նոր կառավարության առաջին նիստում նշեց Փաշինյանը, անհասկանալի է: Նախարարությունների անունները փոխելով չի՞ հո:

Փոխարենը նա թարմացրել է իր աշխատակազմը՝ հավանաբար ավելի հավատարիմներ ընդգրկելով այնտեղ, որից կարելի է եզրակացնել, որ վարչապետի համար ավելի դժվար ժամանակներ են սպասվում, եւ նա ավելի կուռ շրջապատի կարիքն է զգալու:

Նոր խորհրդարանի վերաբերմամբ եւս եզրահանգումները մխիթարական չեն: Միայն մի քանի ուրվագծումներ անենք՝հնգօրյա քննարկումների ֆոնին, հետագայում առիթները շատ են լինելու պատկեր դիտարկելու:

⇨3

Իսրայելում կրոնամոլ խուլիգաններն են հարձակվում Սրբոց Հակոբյանց վանքի վրա, ՀՀ-ում Մայր տաճարի վրա՝ բարենորոգիչները

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

«Ազգի» հուլիսի 22-ի առցանց հրապարակված հոդվածում հրեական եւ իսրայելական մամուլից մանրամասներ քաղելով շարադրել էինք, որ թեեւ Քնեսեթում առկախվեց Հայոց ցեղասպանության օրակարգ մտած քննարկումն ու քվեարկությունը, եւ օրենսդիր մարմինն այժմ արձակուրդում է, բայց կառավարությունը շարունակում է աշխատել, մանավանդ լրջագույն պատրաստությունն է տեսնում 2030-ին ընդառաջ Քրիստոսի մկրտության 2000-ամյա տոնակատարության պատշաճ կազմակերպման համար: Հենց այս հանգամանքից ելնելով՝ մեր առցանց հոդվածում կանխատեսել էինք, թե Հայաստան- Իսրայել դիվանագիտական հարաբերությունները 2030-ին ընդառաջ կակտիվանան:

Ադրբեջանում Իսրայելի առաջին դեսպան, արաբ առաջին քրիստոնյա դիվանագետ **Ջորջ Դիքն** ապրիլից Երուսաղեմում նոր պաշտոն ունի՝ քրիստոնյաների հարցերով է զբաղվում, Նեթանյահուի հանձնակատարն է: Նրա X-ի հարթակում տեղադրված տեսանյութերից դատելով կարող ենք եզրակացնել, որ դեռ չի հանդիպել հայ համայնքի հետ, երեւի տրվելիք դժվար հարցերին անհրաժեշտ արդարացումները չունենալով հապաղում է... Բայց նաեւ չի անդրադարձել օգոստոսի 2-ին Հայոց պատրիարքարանի տարածքում բռնարար հրեա կրոնամոլների խուլիգանությանը, չի դատապարտել նրանց արարքը, որին անդրադարձել ենք ստորեւ: Իսրայելի կառավարության սույն պաշտոնյան ամեն օր աշխատում է ներկայացնել հետեւյալը՝ 1948-ից ի վեր Իսրայելի քրիստոնյա բնակչությունն աճել է՝ 34 000-ից հասել է մոտ 188 000-ի, եւ Երկրորդ համաշխարհայինից հետո Միջին Արեւելքում միակ երկիրն է, որտեղ նվազելու փոխարեն քրիստոնյաների թիվն աճել է:

Անկախ բոլոր իրողություններից, Հայաստանը՝ պետականորեն առաջինը քրիստոնեությունն ընդունած երկիրը, չորս տարի անց մասնակցելու է Քրիստոսի մկրտության այդ նշանավոր իրադարձությանը՝ առանձնահատուկ կարգավիճակով: Պաղեստինի պատմական տարածքներում, որտեղ այսօր Իսրայել պետությունն է, հայերի ներկայությունն արձանագրվել է դեռ Տիգրան Մեծի ժամանակներից: Ք.Հ. 154 թվականին Երուսաղեմում հայ հոգեւորականներ են եղել, 4-րդ դարից հայերը Երուսաղեմում վանքեր են հիմնել, եւ աստիճանաբար ձեւավորվել են Երուսաղեմի հայոց պատրիարքարանը եւ սաղիմահայ համայնքը: 2013 թվականին Երուսաղեմի 97-րդ պատրիարք է ընտրվել Նուրհան արք. Մանուկյանը: Ուրեմն Հայաստան-Իսրայել դիվանագիտական երիտասարդ հարաբերությունները կարող են ակտիվանալ, եթե Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերն ու ներկայությունը մեր կյանքում եւ աշխարհում վերագնահատենք, նրա կառուցած կամրջով քայլենք, հզոր թիկունքը զգանք եւ չտրվենք դրսից թելադրված, այլասերող, բաժանարար հիբրիդային պտտահողմերին:

⇨3

Իրանական գազը եւ Հայաստանի էներգետիկ դիվերսիֆիկացումը. հնարավորություններ եւ սահմանափակումներ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Հայաստան մատակարարվող ռուսական բնական գազին այլընտրանքային աղբյուրներ որոնելու շրջանակում Երեւանի ուշադրությունը, Ադրբեջանից բացի, կենտրոնացել է նաեւ Իրանի վրա: Թեհրանը պատրաստակամություն է հայտնել քննարկել Հայաստան արտահանվող բնական գազի ծավալների ավելացման հնարավորությունը:

Իրան կատարած եռօրյա այցից հետո ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար **Դավիթ Խուդաթյանը** հայտարարեց, որ «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակում իրանական գազի մատակարարումները հնարավոր է առնվազն կրկնապատկել: Նրա խոսքով, դա ոչ միայն կխթանի Հայաստանի էներգետիկ մատակարարումների դիվերսիֆիկացումը (բազմազանեցում), այլեւ երկարաժամկետ հեռանկարում կարող է հնարավորություն ստեղծել գազի տարանցման դեպի այլ ուղղություններ:

Այս նպատակով նախատեսվում է ստեղծել հայ-իրանական աշխատանքային խմբեր, որոնք կուսումնասիրեն տեխնիկական, տնտեսական եւ իրավական հարցերը, ինչպես նաեւ կգնահատեն Հայաստանի տարածքով իրանական գազի հնարավոր տարանցման հեռանկարները:

Սակայն այդ աշխատանքները հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ Իրանի գազային ոլորտի իրական հնարավորություններն ու առկա սահմանափակումները: Թեեւ Իրանը բնական գազի պաշարներով աշխարհում երկրորդ տեղում է, երկրի արդյունահանման հնարավորություններն ու ներքին սպառման արագ աճը միշտ չէ, որ թույլ են տալիս մեծացնել արտահանման ծավալները:

Իրանական գազի արտահանման սահմանափակ հնարավորությունները

Ձեւավորման փուլում գտնվող աշխատանքային խմբերը պետք է հաշվի առնեն, որ թեեւ Իրանը բնական գազի պաշարներով աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը, տարվա որոշ ժամանակահատվածներում, հատկապես ձմռանը, երկիրը բախվում է գազի պահանջարկի կտրուկ աճին: Այդ պայմաններում սպառման պիկը հաղթահարելու նպատակով Թեհրանը նույնիսկ ստիպված է լինում սահմանափակ ծավալներով գազ ներմուծել եւ ավելի ակտիվացնել էներգետիկ դիվանագիտությունը:

Իրանական «Մեհր» լրատվական գործակալության հաղորդմամբ, միջազգային գնահատականներով Իրանը Ռուսաստանից հետո բնական գազի ամենամեծ պաշարներն ունեցող երկիրն է աշխարհում: Այնուամենայնիվ, վերջին տարիներին, հատկապես ձմռան ամիսներին, պարբերաբար քննարկվում են գազի դեֆիցիտի եւ նույնիսկ դրա ներմուծման անհրաժեշտության հարցերը:

Առաջին հայացքից դա կարող է հակասական թվալ, քանի որ նման հարուստ պաշարներ ունեցող երկիրը, կարծես, չպետք է խնդիր ունենա սեփական ներքին պահանջարկը բավարարելու հարցում:

Սակայն մասնագետներն արդարացիորեն նշում են, որ ընդերքում առկա պաշարները դեռեւս չեն նշանակում համապատասխան արտադրական կարողությունների առկայություն:

«Մեհր» լրատվական գործակալության տվյալներով, էական տարբերություն կա բնական գազի պաշարների ծավալի, օրական արդյունահանման հնարավորությունների եւ ներքին սպառման արագ աճի միջեւ, ինչը հանգեցնում է առաջարկի եւ պահանջարկի անհավասարակշռության:

Հենց այդ պատճառով էլ Իրանի էներգետիկ քաղաքականությունը վերջին տարիներին կենտրոնացել է ոչ միայն գազի արդյունահանման ծավալների ավելացման, այլեւ լրացուցիչ գործիքների կիրառման վրա, այդ թվում՝ սահմանափակ ծավալներով գազի ներմուծման եւ էներգետիկ դիվանագիտության ակտիվացման:

Կարեւոր է հասկանալ նաեւ, թե ինչու է Իրանը Թուրքմենստանից բնական գազի ներմուծման վերաբերյալ 25-ամյա պայմանագիր կնքել, որը, սակայն, ֆինանսական տարածայնությունների, կուտակված պարտքերի եւ գազամատակարարումների բազմակի ընդհատումների պատճառով բախվել է լուրջ դժվարությունների, ինչի հետեւանքով տարբեր ժամանակահատվածներում մատակարարումները դադարեցվել են:

Համատեղ աշխատանքային խմբերում ընդգրկված հայ մասնագետները պետք է պարզեն նաեւ, թե ինչու է Իրանը, հատկապես իր հյուսիսային եւ արեւելյան շրջանների գազամատակարարումն ապահովելու նպատակով, շարունակում կարեւորել Թուրքմենստանի հետ համագործակցությունը:

Գազի արտադրության նվազեցման միտումները

Իրանում բնական գազի արդյունահանման հիմնական աղբյուրը «Հարավային Փարսի» հանքավայրն է, որը համատեղ շահագործվում է Իրանի եւ Քաթարի կողմից: Այն համարվում է աշխարհի խոշորագույն բնական գազի հանքավայրերից մեկը եւ ապահովում է Իրանի բնական գազի արտադրության շուրջ 70 տոկոսը:

Սակայն 2026 թվականի մարտին Իրանի դեմ ռազմական գործողությունների ընթացքում իրականացված օդային հարվածների հետեւանքով թիրախավորվեցին նաեւ Ասալույեում գտնվող «Հարավային Փարսի» գազային համալիրի առանձին օբյեկտներ, ինչի հետեւանքով լուրջ խնդիրներ առաջացան գազամատակարարման ոլորտում: Ներքին սպառման առաջնահերթությունից ելնելով՝ Թեհրանը նույնիսկ դադարեցրեց Իրաքին բնական գազի մատակարարումը:

Իրան-Իրաք համատեղ առեւտրի պալատի նախագահը հուլիսի վերջին հայտարարեց, որ երկու երկրների միջեւ պաշտոնական առեւտրաշրջանառության ծավալների նվազման հիմնական պատճառը Իրանի կողմից բնական գազի արտահանման կրճատումն է:

Ավարտվում է նաեւ Իրանի եւ Թուրքիայի միջեւ բնական գազի արտահանման վերաբերյալ 25-ամյա պայմանագրի գործողության ժամկետը:

Առայժմ Թեհրանն ու Անկարան լռում են պայմանագրի երկարաձգման, դրա ավարտի կամ նոր համաձայնագրի ստորագրման վերաբերյալ: Սակայն երկու երկրների լրատվամիջոցներն ու փորձագետներն այս լռությունը համարում են էներգետիկ ոլորտի ամենակարեւոր քննարկվող թեմաներից մեկը: Չի բացառվում, որ Թուրքիա գազամատակարարման ընդհատումը կապված լինի Իրանում գազի ծավալների արդյունահանման նվազեցման հետ: Այդ հարցը նույնպես ենթակա է ուսումնասիրման:

Միաժամանակ շարունակաբար աճում է նաեւ երկրի ներքին սպառումը: Կենցաղային, արդյունաբերական, էլեկտրաէներգետիկական եւ նավթաքիմիական ոլորտներում բնական գազի պահանջարկն անընդհատ մեծացել է, ինչի հետեւանքով Իրանի էներգետիկ համակարգն ավելի մեծ կախվածություն է ձեռք բերել բնական գազից:

Հայաստան մատակարարվող իրանական գազի ծավալների ավելացման հնարավորությունները ուսումնասիրող աշխատանքային խմբերը պետք է հաշվի առնեն նաեւ, որ տարվա որոշ ժամանակահատվածներում Իրանում արտադրության եւ սպառման միջեւ առաջանում է զգալի անհավասարակշռություն: Պատերազմից հետո այդ տարբերության կառավարումն Իրանի էներգետիկ ոլորտի հիմնական մարտահրավերներից մեկն է դարձել:

Գազային համակարգի սեզոնայնությունը

Իրանում գազի սպառման առանձնահատկություններից մեկը դրա արտահայտված սեզոնայնությունն է: Ձմռանը, ջեռուցման պահանջարկի աճի պատճառով, կենցաղային եւ առեւտրային սպառումը մի քանի անգամ գերազանցում է տարվա տաք եղանակների ցուցանիշները: Այդ պայմաններում արտադրվող գազի զգալի մասը հատկացվում է բնակչության կարիքներին, ինչի հետեւանքով արդյունաբերական ձեռնարկությունները ու էլեկտրակայանները հաճախ բախվում են մատակարարումների սահմանափակումների: Նման իրավիճակներում էլեկտրակայանները ստիպված են օգտագործել այլընտրանքային վառելիք՝ դիզելային վառելիք կամ մազութ:

Ցուրտ օրերին պահանջարկի կտրուկ աճը մեծ ծանրաբեռնվածություն է ստեղծում նաեւ գազի փոխանցման եւ բաշխման ցանցի համար: Աշխարհի բազմաթիվ երկրներում նման իրավիճակները մեղմելու նպատակով օգտագործվում են ստորգետնյա գազապահեստարաններ, որտեղ ամռանը կուտակված գազն օգտագործվում է ձմռանը:

Իրանում, սակայն, գազի պահեստավորման հնարավորությունները դեռեւս չեն համապատասխանում սպառման ծավալներին, ինչը սահմանափակում է համակարգի ճկունությունը: Այդ պատճառով հարեւան երկրներից գազի ներմուծումը դիտարկվում է որպես ժամանակավոր միջոց՝ պիկային պահանջարկը բավարարելու եւ մատակարարումների անխափանությունն ապահովելու համար:

Էներգետիկ անվտանգությունը

Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ բնական գազի խոշոր պաշարներ ունենալն ինքնին բավարար չէ էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար: Դրա համար անհրաժեշտ են արտադրության արդյունավետ կառավարում, ժամանակակից ենթակառուցվածքներ, սպառման արդյունավետ վերահսկում եւ ակտիվ տարածաշրջանային համագործակցություն:

Այն պայմաններում, երբ ներքին պահանջարկը շարունակում է արագ աճել, իսկ ձմեռային պիկային սպառումը մեծ ճնշում է գործադրում գազային համակարգի վրա, սահմանափակ ծավալներով գազի ներմուծումն ու էներգետիկ դիվանագիտության ակտիվացումը կարող են դառնալ ժամանակավոր պակասը հաղթահարելու արդյունավետ միջոցներ: Միաժամանակ գազային հանքավայրերի զարգացումը, պահեստավորման հզորությունների ընդլայնումը եւ էներգիայի սպառման արդյունավետության բարձրացումը երկարաժամկետ հեռանկարում կարող են կրճատել արտադրության եւ սպառման միջեւ եղած տարբերությունը եւ ամրապնդել Իրանի դիրքերը տարածաշրջանային գազի շուկայում:

Քաղվի մտահոգությունները

Հայաստան մատակարարվող իրանական գազի ծավալներն ավելացնելու եւ հետագայում այն Հայաստանի տարածքով դեպի այլ երկրներ արտահանելու վերաբերյալ հայ-իրանական պայմանավորվածությունները չէին կարող չանհանգստացնել Բաքվին: Այդ մտահոգությունն արտահայտվել է նաեւ ադրբեջանական **Gunaz.tv**-ի հրապարակման մեջ, որն անդրադարձել է նախարար Դավիթ Խուդաթյանի՝ Իրան կատարած այցին եւ Իրանի նավթի նախարար **Մոհսեն Փաքնեժադի** հայտարարությանը՝ Հայաստանի տարածքով իրանական գազն այլ ուղղություններով արտահանելու հնարավորության վերաբերյալ: Միաժամանակ կայքը նշում է, որ Փաքնեժադը չի հստակեցրել, թե իրանական գազը Հայաստանի միջոցով դեպի որ տարածաշրջանային շուկաներ կարող է արտահանվել:

Ադրբեջանական կայքի կարծիքով, տարածաշրջանում գործող միակ տարանցիկ ենթակառուցվածքը Կովկասյան «Հյուսիս-Հարավ» գազատարն է, որով ռուսական գազը Վրաստանի տարածքով մատակարարվում է Հայաստանին: Ընդ որում, գազատարի վերջնակետը գտնվում է Երեւանում՝ Իրանի սահմանից շուրջ 400 կիլոմետր հեռավորության վրա:

Կայքը նաեւ նշում է, որ տարածաշրջանային շուկաներից Վրաստանն իր բնական գազի հիմնական մասը ստանում է որպես Ադրբեջանից Թուրքիա եւ Եվրոպա արտահանվող գազի տարանցման դիմաց նախատեսված 5-տոկոսանոց վճար, իսկ մնացած պահանջարկը բավարարում է Ադրբեջանից գնվող գազի հաշվին՝ մինչեւ 2046 թվականը գործող պայմանագրի շրջանակում:

Ըստ **Gunaz.tv**-ի՝ Հայաստանի մյուս հարեւանը՝ Թուրքիան, շուտով ավարտում է Իրանից բնական գազի ներմուծման վերաբերյալ 25-ամյա պայմանագրի գործողության ժամկետը (Արդեն ավարտվել է Գ.Ա.): Կայքը նաեւ պնդում է, որ մինչ օրս Անկարան որեւէ հետաքրքրություն չի ցուցաբերել այդ պայմանագիրը երկարաձգելու հարցում:

Քանի դեռ չեն դադարեցվել ռուսական գազի մատակարարումները Հայաստան, եւ քանի դեռ ձմեռը չի թակել հայաստանցիների դուռը, այս եւ վերը նշված մյուս բոլոր հանգամանքները պետք է դառնան ձեւավորվող հայ-իրանական աշխատանքային խմբերի մանրամասն քննարկման առարկա:

Ընտրությունները չե՞ն ավարտվել

⇨1 Աժ քննարկումները շարունակվում են, մեր հրապարակումը պատրաստելու պահին ընդդիմադիր քվոտայով Աժ նախագահի թեկնածու էր առաջադրվել Արամ Վարդեւանյանը, որը, Դավիթ Ղազինյանի եւ մի քանի այլ պատգամավորների հետ, այս խմբակցության ծանր հրետանին է համարվում: Նրա ելույթը ավելի ինստիտուցիոնալ էր՝ որպես նրա հավանական ընտրության երաշխիք: Նոր բնորոշումներ եւս օգտագործեց՝ իշխանության հետ գաղափարապես տիտանական հակադիր են, եւ որ՝ իրենք չեն պարտվել, իշխանությունն էլ չի հաղթել, բա՛:

Ընդհանուր առմամբ հնգօրյա խորհրդարանական քննարկումների առաջին տպավորությամբ թվաց, որ Հայաստանում խորհրդարանական ընտրությունները ոչ թե ավատվել են, այլ դեռ առջեւում են, ու հիմա ամենաթունդ քարոզարշավի փուլն է, համենայնդեպս՝ 29 պատգամավոր ունեցող «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցիչների՝ հայրենիքը սահմանելու, պատգամավորի կոչումն ու պարտականությունները նորից ու նորից գծագրելու (սիրելիներս, Աժ կանոնակարգը դա արդեն արել է) եւ իշխանականներին այբ-ից ֆե խիստ քննադատության ենթարկելու պաթոսախեղդ ելույթներն այդ տպավորությունն էին թողնում, չնայած այդպես էլ չհասկացվեց, թե մանդատ վերցնել-չվերցնելու երկար տատանումներից հետո ինչ օրակարգով են խորհրդարան եկել նրանք, եթե նրանց միակ օրակարգը միշտ եղել է իշխանափոխությունը, Սամվել Կարապետյանին վարչապետ կարգելը: Մանագիտական-ոլորտային մանդատակիրների լայն բացվածքը, որով փորձում էր տպավորություն գործել նոր ուժը, ավելի շատ ոչ թե իշխանությունը հեռացնելու օրակարգ էր մատնանշում, այլ ունեցած ներուժը ցուցադրելու հայտ էր: Այո, ՈՒՀ-ն ունի բավականին լուրջ մասնագիտական ռեսուրս, եւ նրա ղեկավար Նարեկ Կարապետյանն էլ վատ չի նայվում, ի տարբերություն էկզոտիկ բառապաշարով եւ որակումներով աչքի ընկած Սամվել Կարապետյանի (պարականոն՝ Նարեկ Կարապետյանի որակումն է Սամվել Կարապետյանի՝ իշխանություններին գյորմամիշ որակելուն), սակայն նաեւ խորհրդարանի մանդատին ոչ համապատասխան, սովորաբար ընտրարշավին հատուկ զգացմունքայնությամբ եւ դատարկաբանությամբ ելույթներն ասում էին այն մասին, որ նոր պատգամավորական խումբը, նվազագույնը պատգամավորների կեսից ավելին դեռ շատ կտանջեն լսողներին՝ մինչեւ գտնեն պատգամավորական աշխատատոհի ոսկե միջինը, որը նախորդ ընդդիմադիր կորպուսում պատգամավորական պրոֆեսիոնալիզմի առումով արդեն իսկ գտնվել էր: Չնայած նախորդ խորհրդարանի՝ հանրությանը հոգնեցրած սեւ-սպիտակ դիմակայության ձեւաչափի արդյունք է հենց նոր խորհրդարանի ներկա պատկերը:

Բայց ամեն ինչից, այդ թվում՝ նույն պաթոսով ընդդիմադրներին պատասխանող իշխանականների ելույթներից երեւում է, որ պոպուլիզմի դոզան ներկա խորհրդարանում ավելի շատ է լինելու, իսկ «գյորմամիշ-հորթ» ձեւաչափով վերջին բախումը իշխանականների եւ ՈՒՀ-ականների միջեւ (յուղ նստեց սկանդալներ փնտրող լրագրողների սրտին) խոսում է այն մասին, որ տեսարանների պակաս չի լինի նոր թատերաշրջանում, ընդամենը տեսարանների որակների բարելավման հարց է: Գումարած նաեւ այն, որ երբեմն այնպիսի զգացողություն էր, որ ՌԴ շահերի պատուհանից են որոշ պատգամավորներ հարցերին նայում՝ իրենք անգամ երեւի դա չընկալելով կամ լավ էլ ընկալելով:

«Հայաստան» դաշինքի խմբակցության առումով էլ կարելի է միայն ափսոսանք հայտնել, քանի որ 12 պատգամավորներով այս խումբը, որ պրոֆեսիոնալների առումով շահեկանորեն տարբերվում է ընդդիմադիր նոր ու մեծ միավորից, դե ֆակտո վերածվել է երկբեւեռ փոքր խմբի, խնդիրների արծարծման երկու բացվածքով՝ մասնավորքոչարյանական եւ գաղափարական-ՀՅԴ-ական: Առաջինն հստակ երեւաց Լեւոն Քոչարյանի ելույթներում՝ խմբակցության դեֆակտո ղեկավար Ռոբերտ Քոչարյանի մոտեցումների ներկայացմամբ, իսկ ՀՅԴ պատգամավորների ընդհանրական մոտեցումները երեւակելն ըստ ամենայնի ավելի ու ավելի բարդ է լինելու:

Իշխող ՔՊ խմբակցությունում եւս հետաքրքիր մետամորֆոզներ կան:

Այստեղ ուժեղացել է փաշինյանական ուղիղ ազդեցությունն՝ ի դեմս կառավարությունից գործուղված Տարոն Չախոյանի (որն ինտրիգային ոճով ելույթներ է ունենում), Նազելի Բաղդասարյանի, Արայիկ Հարությունյանի, Հակոբ Սիմիդյանի եւ բուն խմբակցության նոր ղեկավար, բացառապես Փաշինյանի վստահելիս համարվող Արուսյակ Մանավազյանի: Հավանաբար էլի, ինչպես վերեւում նշեցինք, Փաշինյանն իր տեսակետները չմիջնորդավորված եւ արագ փոխանցելու եւ խմբակցության ստվերային կառավարման խնդիր ունի, մանավանդ, որ ըստ տարբեր դիտարկումների՝ թիմում հավակնությունների առումով տարբեր դժգոհություններ կան: Ի դեպ՝ մեր կարծիքով ավելի վարչական կառավարման հատկանիշներով օժտված Արուսյակ Մանավազյանը չի ձգում խմբակցության ղեկավարի քաղաքական պաշտոնին, եւ հավանաբար ՔՊ-ում շուտ կնկատեն այդ:

Իսկ Աժ ղեկավար մարմինները ձեւավորող հնգօրյա նիստերն աչքի ընկան ավելի շատ ապաքաղաքական, միջանձնային «ռազբորկաների» մակարդակի խոսույթով, որպես ապացույց ընդամենը հիշենք մի երկու կոլորիտային հատված. «Քեռին լավ է, ամուսինդ ո՞նց է», հարցնում է կոկորդիլոսների հետ կապված պատմությամբ ժամանակին հայտնի դարձած ՔՊ պատգամավորը ընդդիմության փոքր կտորի պատգամավորուհուն: Կամ Աժ նախագահության թեկնածուների քաղաքական որակների մասին խոսելու փոխարեն հնչում էր՝ Ռուբինյանի կինը, Կոնջորյանի կինը, Ռուբինյանի եղբայրը, Կոնջորյանի եղբայրը, Աննա Գրիգորյանի ամուսնու Ռենջռովերը, կոկորդիլոսներով հայտնիի քեռին, «Հայփոստը», «Հայփո՛ստը», «Հայփո՛ստը» (օրակարգի թիվ մեկ հարցն էր «Հայփոստը», փառք Աստծո, գոնե «Հայփոստի» բոլոր խնդիրները վեր հանվեցին), մեկն էլ, պարզվեց, պատգամավոր է դարձել «Հայփոստի» վատ աշխատանքի պատճառով կամ շնորհիվ:

Լսում էի անձնական տիրույթի «ռազբորկաները», մանրթեմայնության մաստերկլասները, նոր ընդդիմության՝ առաջին դասարան ընդունվածի ճոռոմորենով պաթոսախառնուրդ սիրո խոստովանություններն առ հայրենիք, պատգամավորի բարձր կոչման նորովի բացահայտումները, իրենց ԱՌԱՋԻՆ ելույթը առանձնահատուկ նշանավորումներն ու մտածում, որ կգժվենք, մինչեւ նորերն առաջին դասարանից բարձր դասարաններ հասնեն:

Մինչդեռ Հայաստանի շուրջ եւ ներսում մարտահրավերների նոր կուտակում է, ԹՐԻՓՓ-ի պայմանագիրն է շուտով ՍԴ գնալու, ՌԴ-ի պատժամիջոցներն ու հռետորաբանությունն արդեն մոտակա սառն ամիսներին գազի գնի թանկացման տնտեսական պատժամիջոց են գուժում, Իրանի շուրջ լարվածությունը ոչ մի լավ բան չի խոստանում, ռուսական սաբոտաժի տնտեսական հետեւանքներն են ահավոր, իսկ մերոնք դեռ խորհրդարանում իրար հետ նոր-նոր ճշտում են, թե ինչ է հայրենիքը, որն է պատգամավորն ու նրա կոչումը:

Իսրայելում կրոնամոլ խուլիգաններն են հարձակվում Սրբոց Հակոբյանց վանքի վրա...

⇨1 Մի կողմից Իսրայելը, նաեւ նյութական հոսք ապահովելու հեռանկարով, պատրաստվում է 2030-ին ընդառաջ դիմավորել միլիոնավոր քրիստոնյաների՝ Հիսուսի մկրտության 2000-ամյա տոնակատարության առիթով, մյուս կողմից՝ վերջին տարիներին այդ երկրում քրիստոնյաների վրա ճնշման աճ է նկատվում: Գերմանական «Զյուդոյչե ցայթունգի» 2023-ի մի հոդված եմ հիշում, որ մեջբերում էր բենեդիկտյան միաբանության վանական **Շնաբելի** մեկնաբանությունը, որ Սուրբ երկրում միշտ էլ եղել է հասարակական ակտիվ մի շերտ, որ քրիստոնյաների հանդեպ անթաքույց ատելություն է ունեցել, սակայն նրանք լուսանցքում են եղել, ոչ թե Իսրայելի կառավարությունում, եւ դրա վառ օրինակը ազգային անվտանգության նախարար **Իտամար Բեն- Գվիրն** է: Երուսաղեմի կարդինալ **Պիցցաբալլան** էլ 2026-ի հունիսին «Շպիգելին» պատմում էր, թե իրավիճակը վատթարացել է: Չնայած թքելը նորություն չէ, բայց առավել հաճախ է պատահում նման դրսեւորումը, իսկ խորհրդարանական առաջիկա ընտրություններին ընդառաջ «իրավիճակը կարող է առավել տհաճ դառնալ քրիստոնյաների համար», մասնավորապես Հին քաղաքի հրեական թաղամասում կամ Սիոնի վրա:

Օգոստոսի 3-ին իսրայելական, հրեական, նաեւ գերմանական քրիստոնեական լրատվամիջոցներն անդրադարձան շաբաթ կեսգիշերն անց՝ օգոստոսի 2-ին ժամը 1-ին հայկական Սրբոց Հակոբյանց վանքի վրա հարձակմանը՝ թքել են, թակել երկաթյա դարպասը, քարեր նետել հայոց պատրիարքարանի տարածքում: Ոստիկանությունը ահազանգից հետո ձերբակալել է վեց կրոնամոլ հրեայի, որոնցից հինգն անչափահաս են: Կասկածյալներից երեքի համար նախնական կալանք է սահմանվել, երկուսը գրավի դիմաց ազատ են արձակվել: All Israel News- ը օգոստոսի 3-ին անդրադառնալով միջադեպին հղում է անում «տեղացի հայ լրագրող **Գեղամ Բալյանի** X-ի հարթակում գրառմանը», վերահրապարակում բռնությունը հաստատող տեսանյութը՝ կից մեկնաբանությամբ՝ երբ հանցագործները նկատել են, որ մի կին նկարահանում է, քարեր են նետել նրա պատուհանին, հայհոյել՝ «ներս գնա, պոռնիկ» գոռալով ահաբեկել: Ոստիկանությունն արագ է արձագանքել, գրում է նաեւ վերոնշյալ աղբյուրը եւ հաղորդում, թե ազատ արձակված 3 հրեաների համար Երուսաղեմի Հին քաղաք մտնելու 15 օրյա արգելք է սահմանվել: (Հիշեցնենք, որ Հին քաղաքում, Սիոն լեռան վրա է գտնվում հայկական թաղամասը, որ տարիներ ի վեր եւ հատկապես Կովերի պարտեզի շուրջ առեւտրային գործարքից հետո,

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք

ծայրահեղականների համար դարձել է ատելության թիրախ):

Երուսաղեմի դատարանում մնացած երեք բռնարարների համար նախնական կալանքի ժամկետը պահանջել են երկարածգել: All Israel News- ը ներկայացնում է ոստիկանության հայտարարությունը, թե կառույցը «չափազանց լուրջ է վերաբերվում բռնության եւ ռասիզմի բոլոր ձեւերին, շարունակելու է վճռական գործել՝ մեղավորներին բացահայտելու, նրանց պատասխանատվության ենթարկելու, հասարակական անվտանգությունն ապահովելու համար»:

Ինչպես գրում է վերոհիշյալ աղբյուրը, Իսրայելում ուղղափառ եւ ծայրահեղ ուղղափառ մի շարք առաջնորդներ սկսել են խոսել եւ քննադատել թքելու երեւույթի դեմ: Ավելին, ինչպես նշել ենք մեր հոդվածի սկզբում, ապրիլին արտգործնախարարությունը իսրայելցի արաբ քրիստոնյա Ջորջ Դիքին էլ նշանակել է քրիստոնյաների հարցերով հատուկ բանագնաց:

All Israel News- ը գրում է, թե նախագահ **Հերցոգը** բազմիցս դատապարտել է նման վայրագությունները, նույնիսկ վերջերս անդրադարձել է այդ խնդրին Fox News-ին տված հարցազրույցում: «Մեծ հարգանք ունեմ Սուրբ երկրի քրիստոնեական համայնքների հանդեպ: Խոսում եմ եկեղեցական բոլոր առաջնորդների հետ: Քրիստոնեական համայնքները Իսրայելում գերակայություն են», ասել է Իսրայելի նախագահը՝ հայտնելով, թե ոտնձգությունների դեմ վճռական գործողություններ են ձեռնարկելու:

Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, նաեւ Քնեսեթում հարցի առկախումը, Իսրայելում եւ աշխարհասփյուռ հրեական համայնքներում ուշադրություն են բեվեռել Հայաստանի, հայության խնդիրներին: Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտպանությունը ստանձնած Իսրայել պետության նախագահը, երբ խոստանում է վճռական գործողությամբ՝ եկեղեցու դռանը հարվածող կրոնամոլ հրեային պատժելով հաստատել նախ՝ օրինականությանն իր հավատարմությունը, ապա՝ հարգանքը քրիստոնեական համայնքին, կարող է հետեւել նաեւ, թե Սուրբ Էջմիածնի դռանը հարվածող հայի հանդեպ ի՞նչ պատիժ է սահմանում 301 թվականին քրիստոնեությունը պետականորեն ընդունած Հայաստանը: Պատժվո՞ւմ են այն խուլիգանները, որ հայ հոգեւորականի, հայոց սրբությունների վրա են հարձակվում, Ամենայն հայոց կաթողիկոսի մորուքը, հանդերձներն էին համարձակվում քաշքշել տարիներ եւ ամիսներ առաջ:

Կեղծ բարեպաշտություն չէ՞, երբ բարենորոգում շղարշի տակ մեղավոր մահկանացուները, Մարդու եւ Հայոց եկեղեցու գահակալի անմեղության կանխավարկածը, սուրբ Մյուռոնով օծյալ լինելը մոռացած՝ նոր խաչյալ են գտել: Քրիստոսը սա կների՞:

Արմեն Ակոբ. Շոշափելով անտեսանելին Վենետիկի բիենալեում

ԱՐԵՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ՊԻԵՏՐԱՍԱՆՏԱ, Իտալիա - Արմեն Ակոբը *(Արմեն Կրպոյան, ծնված Կահիրեում, 1969-ին) տասներեք տարեկանից նկարչություն է ուսանել նկարիչ Սիմոն Շահրիկյանի մոտ: Հետագայում քանդակագործություն է սովորել Կահիրեի Հելուանի համալսարանի գեղարվեստի բաժնում: Ավարտելուց հետո երեք տարի քանդակագործություն է դասավանդել նույն համալսարանում: 1997-2000 թթ. մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների Եգիպտոսում, Քաթարում, Իտալիայում, Բելգիայում, ԱՄՆ-ում եւ Արաբական Միացյալ Էմիրություններում, 1998-ին արժանացել է «Աշնանային սալոնի» քանդակի մրցանակին: 2000 թվականին ստացել է Եգիպտոսի հեղինակավոր «Հռոմի մրցանակ» պետական պարգեւը՝ գեղարվեստական ստեղծագործության համար:*

Արմեն Ակոբը հայտնի է վերացական քանդակագործության ասկետիկ մոտեցմամբ՝ հիմնականում օգտագործելով սեւ գրանիտ եւ բազալտ: Միջազգային ճանաչում է ձեռք բերել խոհահայեցողական քանդակներով եւ գեղանկարչական շարքերով, ինչպիսիք են «Հպում», «Սուֆջիկջ» եւ «ՄԱՆՏՐԱ»: Նրա ստեղծագործությունները պահվում են այնպիսի հեղինակավոր հավաքածուներում, ինչպիսիք են Եգիպտոսի Ժամանակակից արվեստի թանգարանը, «Մաթհաֆ» ժամանակակից արվեստի արաբական թանգարանը եւ Բարջիլ արվեստի հիմնադրամը:

Արմեն Ակոբի մասին ավելի մանրամասն կարելի է տեղեկանալ նրա կայքէջից՝ https://www.armenagop.com

-Արմե՛ն, կա տեսակետ, որ դասական քարե քանդակագործությունն այսօր աշխարհում որոշակի ճգնաժամ է ապրում: Համաձա՞յն եք:

-Ես այդպես չեմ կարծում: Այո՛, կա մի սերունդ, որը, հայեցակարգային արվեստի ազդեցության հետեւանքով հեռացել է ստեղծագործելու բուն գործընթացից եւ կտրվել նյութից: Սակայն ես միշտ հավատացել եմ, որ դա չի կարող երկար շարունակվել. մենք չենք կարող երեխաներին արգելել հաճույք ստանալ նկարելուց, ուստի սպասում էի փոփոխության: Հիմա արդեն տեսնում եմ, որ այդ փոփոխությունը տեղի է ունենում, գուցե նույնիսկ հակառակ ծայրահեղ ուղղությամբ, երբ սկսում են երեւալ արհեստագործական վարպետության վրա հիմնված, երբեմն նույնիսկ՝ չափազանցված ստեղծագործություններ:

-Իտալիան շարունակում է մնալ աշխարհի քանդակագործության գլխավոր կենտրոններից մեկը, եւ հաճախ դժվար է պատկերացնել, որ ոչ իտալացի քանդակագործները կարող են այնտեղ մեծ ճանաչման հասնել: Ձեր կարծիքով, ի՞նչ նոր հայացք եք բերում ժամանակակից իտալական քանդակագործությանը:

-Կցանկանայի հստակեցնել, որ թեեւ ավարտել եմ քանդակագործության բաժինը եւ ստեղծագործական գործունեությանս առաջին տարիներին առավելապես հայտնի էի որպես քանդակագործ, ես միշտ զբաղվել եմ նաեւ գեղանկարչությամբ եւ գծանկարչությամբ: Վերջին ինը տարիներին ցուցահանդեսներում քանդակների հետ մեկտեղ ներկայացրել եմ գեղանկարներ, իրականում՝ նույնիսկ ավելի շատ նկարներ, քան քանդակներ: Իմ ցուցահանդեսներն ավելի շատ բազմամասնագիտական բնույթի են: Բացի այդ, իմ գործունեությունը միայն Իտալիայով չի սահմանափակվում. կարելի է ասել՝ արտերկրում ավելի հաճախ եմ ներկայանում:

Արմեն Ակոբ





Արմեն Ակոբ, Եգիպտոսի տաղավար, Վենետիկի բիենալե, 2026 (լուսանկարները՝ Մատեո Լոսուրդոյի)

Եթե ավելի լայն դիտարկենք, ապա իտալական արվեստի միջավայրը միջազգային է: Ժամանակակից արվեստում իրենց ուժեղ ներկայությունն ունեն բազմաթիվ արվեստագետներ, ինչպիսիք են Միտորջոյը, Կունելիսը եւ Մեդհաթ Շաֆիկը: Իտալացիները շատ հետաքրքրասեր են եւ բաց՝ տարբեր մշակույթների նկատմամբ: Գուցե միշտ պատրաստ չեն անմիջապես ընդունելու դրանք, բայց, անկասկած, պատրաստ են ծանոթանալու: Ինձ համար հաճելի անակնկալ էր, երբ հրավիրվեցի մասնակցելու մի նախագծի, որի շրջանակում տեղացիները քվեարկությամբ պետք է ընտրեին, թե ինչ ստեղծագործություն պիտի իրականացվի իրենց երկաթուղային կայարանի հարակից տարածքում: Իմ քանդակային շատրվանը հաղթեց եւ արժանացավ Մաստրոյանիի մրցանակին: Իտալիայի՝ շատրվանների ստեղծման դարավոր ավանդույթն իմանալով՝ չէի սպասում, որ նրանք կարող են այդքան բաց եւ հետաքրքրված լինել իմ ժամանակակից, խոհահայեցողական ստեղծագործությամբ:

- Այս տարի դուք ներկայացնում եք Եգիպտոսը Վենետիկի բիենալեում: Ո՞րն է ձեր մոտեցումը եւ ի՞նչ հիմնական գաղափար է ընկած ներկայացման հիմքում:

- Իմ մոտեցումն է շարունակել աշխատել նույն կերպ՝ անկախ միջոցառման հսկայական մասշտաբից:

Այցելուներին խնդրում ենք լռություն պահպանել եւ տաղավարում չլուսանկարել ու չօգտվել բջջային հեռախոսներից: Տաղավարը կոչվում է **«Լռության տաղավար. Շոշափելիի եւ անշոշափելիի միջեւ»**: Ես հավատում եմ, որ լռությունը կարող է մարդկանց հնարավորություն տալ վերամիավորվելու սեփական անձի հետ: Լռությունը կարող է օգնել՝ ճանապարհ բացել դեպի մարդու ներքին ձայնը:

Տաղավարն ունի երեք տարածք, որոնց առանցքում մարդու ներաշխարհ տանող ուղիներն են: Առաջին տարածքում քանդակի եւ գեղանկարչության միջոցով այցելուն հրավիրվում է հաղորդակցվելու անշոշափելիին: Երկրորդ սրահում հանդիսատեսին առաջարկում ենք դիպչել գրանիտե քանդակին: Քանի որ գրանիտը գալիս է Երկրի խորքերից, այս հրավերը նշանակում է հաղորդակցվել Երկրի միջուկի հետ, ինչը, կարծում եմ, կարող է մեզ օգնել կապ հաստատել նաեւ մեր սեփական էության միջուկի հետ:

Վերջին սրահը հրավիրում է դիտելու անտեսանելին եւ մեծադիր կտավի ու քանդակի միջոցով ապրելու խորհրդահայեցողական փորձառություն: Նկարը ստեղծված է մեդիտատիվ գործընթացի միջոցով, որի ընթացքում ամենաբարակ գրչածայրով կտավի վրա կետեր են դրվում՝ յուրատեսակ «ժեստային մանտրայի» ձեւով: Ժամանակի ընթացքում կետերի կուտակումը խավարից ծնում է լուսարձակություն: Այսպիսով, նկարը դառնում է ժամանակի նյութականացում՝ «ժեստային մանտրայի» ծիսական կրկնության միջոցով: Հուսով եմ, որ այս ստեղծագործությունները կօգնեն այցելուներին վերամիավորվել իրենք իրենց հետ, իսկ երբ դա տեղի է ունենում, մարդը միավորվում է ամբողջ տիեզերքի հետ, եւ դա դառնում է տիեզերական իրադարձություն:

«Լռության տաղավարում» կան նաեւ ձայնային ստեղծագործություն եւ բույրի տարածում, որոնք ուղեկցում են վերջին սրահի նկարին եւ քանդակին՝ ստեղծելով ամբողջական, խորասուզող փորձառություն:

-Դուք շրջանառության մեջ եք դրել «անդրժամանակակից» (Transcontemporary) եզրը՝ նկարագրելու արվեստի մի հայեցակարգ, որի նպատակն է ստեղծել այնպիսի գործեր, որոնք սահմանափակված չեն որեւէ մշակութային համատեքստով: Այնուամենայնիվ, դուք կամ արվեստաբանները ձեր ստեղծագործություններում տեսնո՞ւմ եք առանձնահատուկ եգիպտական կամ հայկական տարրեր:

-«Անդրժամանակակից» հասկացությունն առաջացել է այն համոզմունքից, որ արվեստի եւ մարդկայնության հիմնարար արժեքները միշտ գոյություն են ունեցել մարդկության ողջ պատմության ընթացքում: Ես չեմ կարծում, թե քարանձավային արվեստն ինձնից ավելի հեռու է, քան որեւէ ժամանակակից ստեղծագործություն: Իսկ ինչո՞ւ պետք է այդպես լինի: Ցանկացած իսկական, ազնվորեն ստեղծված արվեստի գործ իր մեջ կրում է մարդկային փորձառություն եւ ճառագում է այնպիսի էներգիա, որը կարող է ներքուստ ընկալվել այլ մարդկանց կողմից: Երբ արվեստի գործ եմ դիտում, չեմ մտածում՝ այն նոր է, թե՞ հին: Այն կա՛մ հուզում է ինձ, կա՛մ՝ ոչ: Մնացած բոլոր պատմությունները, որոնք հյուսվում են դրա շուրջ, ինձ համար էական չեն:

Մեծանալով Եգիպտոսում եւ շրջապատված լինելով հնագույն քանդակներով, որոնք փոխանցում էին իրենց ներքին էներգիան, ես զգում էի հպարտություն, արժանապատվություն եւ սրբություն: Դա ինձ ստիպում էր մտածել, թե ինչպես է հնարավոր այդ էներգիան զգալ հազարամյակներ անց: Սա նշանակում է, որ որոշ արժեքներ հավերժական են՝ ճիշտ այնպես, ինչպես նյութը: Սովորաբար խոսում են այն մասին, որ գրանիտը դիմանում է ժամանակին, սակայն ոչ միայն դա. այդ սրբությունը, այդ ներքին էներգիան նույնպես դիմանում է ժամանակին:

- Սփյուռքահայ յուրաքանչյուր ընտանիք ունի իր հետաքրքրական եւ հաճախ՝ ողբերգական պատմությունը: Ո՞րն է ձե՛ր ընտանիքի պատմությունը:

- Իմ պապը Մուսա լեռից էր, նրա եղբայրը Մուսա լեռան ինքնապաշտպանության ղեկավարներից էր, որի մասին պատմվում է Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում: Երբ նրանք փախչում էին, նրանց օգնության է հասել ֆրանսիական մի նավ: Դրա ղեկավար գնդապետը չի սպասել պաշտոնական թույլտվության եւ անմիջապես նավ է ուղարկել՝ հայերին փրկելու: Նավը հասել է Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաքը: Իմ պապը մնացել է Եգիպտոսում եւ այնտեղ ստեղծել իր կյանքը, իսկ նրա եղբայրը տեղափոխվել է Լիբանան:

-Արտերկրում ցուցահանդեսներ կազմակերպելը մեծ ծախսեր է պահանջում: Այնուամենայնիվ, կարծո՞ւմ եք, որ մի օր Հայաստանում եւս կտեսնենք ձեր անհատական ցուցահանդեսը:

-Անպայմա՛ն, եւ հույս ունեմ՝ շատ շուտով: Երբ երիտասարդ էի, արվեստի մասին իմ առաջին գրքերից մեկը Հայաստանի ազգային պատկերասրահի պատկերագիրքն էր: Այնտեղ ցուցադրվելն իմ երազանքներից մեկն է, իսկ իմ շատ երազանքներ արդեն իրականություն են դարձել...

Շուշին՝ պատմական ճշմարտության լույսի ներքո.
Ֆիլմի ցուցադրություն Թեքեյան կենտրոնում

Հուլիսի 17-ին Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ «Շուշի. Անհերքելի փաստեր» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը, որը համախմբել էր պատմությամբ, մշակույթով եւ ազգային ժառանգությամբ հետաքրքրվող հանդիսատեսի:

Ֆիլմը հանդիսատեսին ներկայացրեց Շուշիի հարուստ եւ բազմադարյա պատմությունը՝ հիմնված պատմական փաստերի, սկզբնաղբյուրների եւ գիտական ուսումնասիրությունների վրա: Ստեղծագործությունը փաստարկված կերպով անդրադառնում է քաղաքի կազմավորման պատմությանը, նրա մշակութային եւ հոգեւոր նշանակությանը եւ հայկական հարուստ ժառանգությանը:

Ֆիլմի հեղինակային եւ ստեղծագործական խումբը միավորել է պատմաբանների, հետազոտողների եւ կինոգործիչների՝ նպատակ ունենալով ստեղծել պատմական ճշգրտության վրա հիմնված ամբողջական, հավաստի եւ փաստարկված աշխատանք: Ներկայացված նյութը հանդիսատեսին հնարավորություն տվեց նորովի գնահատելու Շուշիի բացառիկ դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության եւ մշակութային ժառանգության մեջ:

Միջոցառման ավարտին ֆիլմի ռեժիսոր եւ օպերատոր **Գեւորգ Տեր-Ղազարյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության, ցուցաբերած հետաքրքրության եւ ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ նման հանդիպումները կարեւոր հարթակ են պատմական փաստերի հանրայնացման եւ սերունդներին արժանահավատ պատմություն փոխանցելու գործում:



Ֆիլմի սցենարի հեղինակն է **Արսեն Մելիք-Շահնազարովը**: Գլխավոր խորհրդատուներն են **Վալերի Ավանեսյանը** եւ **Արտակ Մաղալյանը**, իսկ խմբագիրները՝ **Ժաննա Ներսիսյանը** եւ **Վաչագան Փահլեւանյանը**: Մոնտաժի ռեժիսորն է **Սամվել Ամիրխանյանը**, մոնտաժը՝ **Ռուբեն Օսիպովինը**: Օպերատորներն են **Տիգրան Պետրոսյանը** եւ **Գագիկ Սարգսյանը**, տեխնիկական աջակցությունը՝ **Արմեն Ղազարյանի**: Տեքստը կարդում են **Վաչագան Փահլեւանյանը** եւ **Վարդուհի Բաղդասարյանը**, թարգմանությունը՝ **Ներսես Աթաբեկյանը**: Տեքստի վրա աշխատել են **Վահրամ Աղաջանյանը** եւ **Սուսաննա Աբրահամյանը**: Երգի կատարողն է **Տիգրան Մկրտչյանը**, երաժշտության հեղինակը՝ **Էդուարդ Ղազարյանցը**, իսկ խոսքի հեղինակը՝ **Հոմերոս Վանյանը**:

«Կռունկ. հարյուրամյա ճանապարհորդություն»

Արգենտինական www.arteinformado.com կայքէջը տեղեկացնում է, որ հուլիսի 2-ին Արգենտինայի Կորդոբա քաղաքում բացվել է «Կռունկ. հարյուրամյա ճանապարհորդություն» ցուցադրությունը: Այն լայնածավալ ինտերակտիվ նախագիծ է, որը ստեղծվել է Կորդոբայի հայկական համայնքի նախաձեռնությամբ՝ «Էսպիլուս» եւ «Մենք» ստեղծագործական խմբերի համագործակցությամբ եւ նվիրված է Կորդոբայի հայ համայնքի հաստատման հարյուրամյակին: 1926 թվականին քաղաքի Պուեյրեդոն թաղամասում հիմնադրվել է Սուրբ Գեւորգ հայկական առաքելական եկեղեցին՝ Հարավային Ամերիկայի առաջին հայկական առաքելական տաճարը:

Ցուցադրությունը միավորում է արվեստը, պատմական հիշողությունն ու դիմացկունության գաղափարը: Առաջին հատվածում արվեստի գործերը տեղադրված են առաստաղի տակ: Այցելուները մուտքի մոտ ստանում են հայելային հատուկ սարք, որի միջոցով կարողանում են տեսնել միայն վերեւում գտնվող պատկերները՝ նայելով ներքեւ: Այս անսովոր տեսողական փորձառությունը փոխում է տարածության ընկալումը՝ առաջացնելով անկշռության, գլխապտույտի եւ անորոշության զգացողություններ: Ծաղիկների, հարյուրավոր թղթե նավակների, կախովի կամուրջների, բույրերի եւ դուդուկի հնչյունների ուղեկցությամբ այցելուները խորհրդանշական կերպով վերապրում են հայ Սփյուռքի ճանապարհը՝ անապատը, կորուստը, անորոշությունը, բայց նաեւ նոր կյանքի ծաղկումն ու արմատավորումը Կորդոբայի լեռնաշխարհում:

Երկրորդ հատվածում այցելուներն անմիջականորեն հաղորդակցվում են երեք խորհրդանշական ինստալացիաների հետ: Ճամպրուկները խորհրդանշում են բռնի տեղահանությունն ու պահպանված մշակութային ժառանգությունը, պատն ու կռունկների պատկերները հիշեցնում են հայկական եկեղեցու պատուհանները, իսկ հայելապատ լանդշաֆտում Հայաստանի ժայռոտ բնաշխարհն ու Կորդոբայի լեռները միավորվում են անսահման տեսողական տարածության մեջ՝ խորհրդանշելով ժողովուրդների մեկդարյա բարեկամությունն ու փոխադարձ հարգանքը: Նախագիծն առանձնանում է նաեւ բնապահպանական մոտեցմամբ. լանդշաֆտներն ստեղծվել են վերամշակված պոլիէթիլենից, պլաստիկ շշերից, ստվարաթղթից, մետաղալարից եւ հին թերթերից՝ համադրելով ձեռքի աշխատանքի ավանդական տեխնիկաները թվային եռաչափ անիմացիաների եւ տեսաձայնային պրոյեկցիաների հետ:

«Կռունկը» նաեւ հավաքական ստեղծագործության օրինակ է՝ միավորելով փորագրիչների, նկարիչների, քանդակագործների, խեցեգործների, երաժիշտների, ճարտարապետների, եռաչափ եւ ընդլայնված իրականության մասնագետների համատեղ աշխատանքը: Մասնակիցների մեջ են **Միգել Անխել Բարսեղյանը, Ադրիանա Միրանդան, Վարինիա Խոֆրեն, Ինես Մարիետտին, Քրիստիան Խակոնոն, Անա Ջուֆրիդան, Պերի Լաբեյրին, Մոնիկա Խակոբոն, Ռոմինա Հայաստանյանը, Մարկոս** եւ **Կրիստոբալ Թաթյանները**:

Ցուցահանդեսը գործելու է մինչեւ սույն թվականի սեպտեմբերի 26-ը:

Ա. Բ.

«Մեր խնդիրը չէ գերմանացի լրագրողներին ասել՝ ինչի մասին գրեն...»

⇨1 «Ինչպե՞ս է դեսպանությունը հակազդում եվրոպական կառույցներում՝ ներառյալ ԵԽԽՎ-ում եւ Եվրոխորհրդարանում գերմանացի որոշ քաղաքական գործիչների ակտիվությամբ Ադրբեջանի դեմ կողմնակալ նախաձեռնություններին» հարցին Աղաեւը այսպես է արձագանքում՝« պատրաստ ենք օբյեկտիվ քննադատության, այդուհանդերձ պետք է տարբերակել այն ապակառուցողական քաղաքական կողմնակալությունից: Արագ արձագանքում ենք, ներկայացնում մեր դիրքորոշումը՝ հիմնվելով իրավական փաստաթղթերի, փաստերի վրա: Առանձին քաղաքական գործիչների կողմնակալ ությունը չպետք է դիտարկել իբրեւ պետության եւ հասարակության դիրքորոշում: Ի հեճուկս դժվարությունների, ԳԴՀ-ում Ադրբեջանի բարեկամների թիվն աճել է:

ԳԴՀ մեդիատարածքում «տեղեկատվական պատը» հաղթահարելու մասին հարցին Աղաեւը պատասխանում է, թե մի շարք թեմաների հանդեպ «քարացած» մոտեցում կա, հիմնականն այն է, որ «տարածաշրջանը շարունակում են դիտարկել նախկին հակամարտության պրիզմայով: Ադրբեջանը խաղաղություն է հաստատել սեփական ջանքերով, դարձել ժամանակակից տնտեսությամբ, անկախ արտաքին քաղաքականությամբ, բազմամշակույթ ավանդույթներով ուժեղ պետություն, որ կարեւոր դեր է խաղում Եվրոպայի էներգետիկ անվտանգության եւ միջմայրցամաքային տրանսպորտային կապն ապահովելու հարցում»: «Մեր խնդիրը չէ գերմանացի լրագրողներին ասել, թե ինչի մասին գրեն, այլ նրանց հասանելի դարձնել անհրաժեշտ փաստերը, նպաստել Ադրբեջան այցին»,ասում է Աղաեւը: «Ազգ»-ում գրել ենք, թե ինչպես էր Աղաեւը գերմանացի լրագրողին «դաս տալիս» Նախիջեւանի փոխարեն Նախչվան գրել: Գերմանացի լրագրողները ԼՂ ձեւի կողքին Արցախ են գրում, դրա դեմ դեռ չեն պայքարում, քանզի դեռ չեն որոշել օտար լեզվով՝ Karabakh է, թե՞ Garabagh:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

Հրաչյա Պողոսյան. մարդ, որը շաղկապում է անցյալն ու ներկան՝ հանուն ապագայի

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ
ՌԴ-ում «Ազգի» հատուկ թղթակից

Մարդուց հետո աշխարհում մնում է այն, ինչը նա հասցնում է տալ ուրիշներին: Մի բարի ձեռք՝ մեկնված դժվար պահին: Մի անուն՝ փրկված մոռացությունից: Մի հուշարձան՝ կանգնեցված նրանց համար, ովքեր այլեւս չեն կարող պատմել իրենց մասին: Մի գիրք՝ թողնված գալիք սերունդներին՝ գուցե նրանցից մեկի մտքով մի օր անցնի այն հասցնել մինչեւ աստղերը...

Եվ երբ այդ ամենը դառնում է ոչ թե պարզապես գեղեցիկ ցանկություն, այլ մարդու կյանքի ճանապարհը՝ բարությունը դառնում է ապրած կյանքի իմաստ:

Հրաչյա Միսակի Պողոսյանի անցած ճանապարհը հենց այդպիսի առաքելության պատմություն է:

Նա իր գործերով փորձում է պահպանել այն, ինչ ժամանակը կարող է մոռացության մատնել, վերադարձնել անուններ ու պատմություններ, անցյալի հիշողությունը հասցնել ներկային եւ այն վստահել ապագային: Նրա ստեղծած յուրաքանչյուր հուշարձան, հրատարակած յուրաքանչյուր գիրք, կյանքի կոչած յուրաքանչյուր ծրագիր մի յուրօրինակ խոստում է նրանց, ովքեր եղել են մեզանից առաջ, եւ նրանց, ովքեր դեռ գալու են մեզանից հետո:

Հիշողությունը նույնպես խնամքի կարիք ունի: Եվ միշտ պետք է լինի մեկը, ով իր վրա կվերցնի չմոռանալու պատասխանատվությունը:

Օգոստոսի 11-ին լրանում է Սանկտ Պետերբուրգում բնակվող եւ գործունեություն ծավալող մեր նշանավոր հայրենակից, ճանաչված բարերար ու հասարակական գործիչ, «ԱԶԳ» թերթի վաղեմի բարեկամ Հրաչյա Պողոսյանի ծննդյան 56-րդ տարեդարձը:

Ավելի քան երեք տասնամյակ բնակվելով եւ գործունեություն ծավալելով Սանկտ Պետերբուրգում՝ նա կարողացել է իր անունը կապել բարեգործության, հայրենասիրության, պատմական հիշողության պահպանման եւ հասարակական պատասխանատվության հետ: Բայց նրա գործունեության ամենակարեւոր առանձնահատկությունը, թերեւս, այն է, որ բարությունը նրա համար երբեք առանձին նախաձեռնություն չի եղել:

Այն դարձել է ապրելակերպ: Դարձել է վերաբերմունք մարդու հանդեպ: Դարձել է պարտք հայրենիքի ու պատմության հանդեպ: Եվ դարձել է այն ճանապարհը, որով այսօր ճանաչում են Հրաչյա Պողոսյանին ոչ միայն Հայաստանում եւ Ռուսաստանում, այլեւ աշխարհի բազմաթիվ երկրներում:

Հրաչյա Պողոսյանի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ աշխարհի 14 երկրներում կյանքի են կոչվել պատմամշակութային, կրթական եւ հոգեւոր նշանակության ավելի քան 500 ծրագրեր:

Թվերը տպավորիչ են: Բայց դրանց հետեւում թվերից շատ ավելին կա: Կան վերականգնված հուշարձաններ: Կան նոր կանգնեցված կիսանդրիներ: Կան մարդկանց հիշողությանը վերադարձված անուններ: Կան դպրոցներ ու թանգարաններ: Կան գրքեր, ամսագրեր, վավերագրական ֆիլմեր: Եվ կան հարյուրավոր պատմություններ, որոնք գուցե կկորչեին ժամանակի մեջ, եթե **որեւէ մեկը** չորոշեր դրանք պահպանել: Հրաչյա Պողոսյանը հանդիսանում է այդ **«մեկը»** արդեն երկար տարիներ:

Նրա բարեգործական ծրագրերի զգալի մասը նվիրված է Հայրենական մեծ պատերազմի իրադարձություններին եւ հերոսներին: Դա պատահական չէ: Նրա գործունեության մեջ պատմական հիշողության գաղափարը մշտապես առանձնահատուկ տեղ է զբաղեցրել: Հիշել նրանց, ովքեր ծառայել են իրենց երկրին: Վերադարձնել մոռացված անունները: Պահպանել այն, ինչ ժամանակը փորձում է հեռացնել մարդկային հիշողությունից:

Նրա նախաձեռնությամբ եւ միջոցներով ստեղծվել են հերոսների կիսանդրիներ, հուշատախտակներ, հուշակոթողներ, հրատարակվել են պատմական եւ վավերագրական նշանակության գրքեր: Այդ ամենը մի մեծ գաղափարի տարբեր արտահայտություններ են:

Չմոռանալ: Գուցե հենց այս մեկ բառն է լավագույնս բացատրում Հրաչյա Պողոսյանի գործունեության ամբողջ փիլիսոփայությունը:

Չմոռանալ մարդուն: Չմոռանալ հերոսին: Չմոռանալ ուսուցչին: Չմոռանալ հայրենիքը: Չմոռանալ պատմությունը:

Եվ սեփական հնարավորությունների սահմաններում անել ամեն ինչ, որ չմոռանան նաեւ ուրիշները:

Հենց այդ աշխատանքի գնահատականներից մեկն էլ դարձավ 2023 թ. դեկտեմբերի 20-ին Հրաչյա Պողոսյանի ընդգրկումը «Ռուսաստանի ոսկե անունների» ռեգիստրում: Այդ ճանաչումը մեկ օրվա կամ մեկ ծրագրի արդյունք չէր: Այն տասնամյակներով շարունակված աշխատանքի գնահատական էր՝ աշխատանքի, որի կենտրոնում մշտապես եղել են մարդը, պատմությունը եւ հասարակությանը օգտակար լինելու գաղափարը:

Մեկ տարի անց՝ 2024 թ. դեկտեմբերի 6-ին, Սանկտ Պետերբուրգում անցկացված միջազգային եւ միջտարածաշրջանային համագործակցության ուղորտի «Ոսկե առյուծ» մրցանակաբաշխության ժամանակ Հրաչյա Պողոսյանը դարձավ Սանկտ Պետերբուրգի արտաքին հարաբերությունների կոմիտեի ամենամյա մրցանակի դափնեկիր:

Բայց պարգեւներից ու կոչումներից առավել Հրաչյա Պողոսյանի գործի արժեքը զգացվում է այնտեղ, որտեղ նրա նախաձեռնությունները սկսում են ապրել սեփական կյանքով:

Այդպիսի նախաձեռնություններից է 2023-ին Սանկտ Պետերբուրգում ստեղծված «Պահպանելով հիշողությունը» թանգարանը:

Անվանումն արդեն իսկ ամբողջական գաղափար է: Ոչ թե պարզապես հավաքել ցուցանմուշներ: Այլ պահպանել հիշողությունը:

Հսկայածավալ ծրագիրը կյանքի կոչվեց Հրաչյա Պողոսյանի անունը կրող բարեգործական հիմնադրամի կողմից՝ Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Ալեքսանդր Բեգլովի աջակցությամբ: Եվ շատ կարճ ժամանակ անց թանգարանը դարձավ քաղաքի մշակութային եւ հասարակական կյանքի ճանաչված կենտրոններից մեկը:

Այդ թանգարանը Հրաչյա Պողոսյանի բազմաթիվ գեղեցիկ ու հիշարժան մտահղացումներից միայն մեկն է: Նրա նախաձեռնությունները երբեմն ծնվում են պատմության հանդեպ պարտքի զգացումից, երբեմն՝ հայրենիքի ու մշակույթի նկատմամբ սիրուց, իսկ երբեմն այնքան անսովոր ու համարձակ են լինում, որ մարդկային հիշողության գաղափարը հասնում է նույնիսկ այնտեղ, որտեղից երկիրը փոքրիկ կապույտ գունդ է երեւում:

Տիեզերք... առաջին հայացքից դժվար է պատկերացնել, թե ինչ կարող է միավորել բարեգործին, հայ մեծ բանաստեղծին եւ երկրից հարյուրավոր կիլոմետրեր բարձր սլացող տիեզերակայանը:

Բայց Հրաչյա Պողոսյանի նախաձեռնությունների աշխարհում երբեմն ամենահեռավոր թվացող կետերը միանում են իրար: Եվ այդպես եղիշե Չարենցի պոեզիան հասավ տիեզերք:

Հայ մեծ բանաստեղծի ստեղծագործությունների՝ 35 լեզուներով թարգմանված ժողովածուն ավելի քան 200 օր անցկացրեց Միջազգային տիեզերակայանում: Այն շրջեց երկրի շուրջը, վերադարձավ տիեզերքից եւ 2026 թ. մայիսի 16-ին՝ «Թանգարանների գիշեր» ամենամյա միջոցառման օրը, Հրաչյա Պողոսյանի ձեռքով իր վերջնական հանգրվանը գտավ այնտեղ, որտեղից, թերեւս, ամենից շատ էր սպասվում՝ Երեւանի եղիշե Չարենցի տուն-թանգարանում:

Այդ օրը տուն վերադարձավ ոչ միայն մի գիրք: Տիեզերքից վերադարձավ Չարենցի խոսքը:

Ժողովածուն թանգարանին հանձնելու հանդիսավոր արարողությանը ներկա էին բանասիրական գիտությունների դոկտոր, Երեւանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի պատվավոր վարիչ Սամվել Մուրադյանը, «Հայ Փաստ» վավերագրական ֆիլմերի ստուդիայի գեղարվեստական ղեկավար Արթուր Կարագյոզյանը, եղիշե Չարենցի թոռնուհի Գոհար Չարենցը եւ այլ հյուրեր:

Տիեզերք ուղարկված յուրաքանչյուր առարկա չէ, որ վերադառնում է Երկիր: Իսկ վերադարձածների վրա դրվում է հատուկ կնիք, որը հավաստում է տիեզերական ուղեծրում գտնվելու փաստը: Ռուսաստանի Դաշնության հերոս, փորձարկող տիեզերագնաց Օլեգ Արտեմեւը, ժողովածուն Հրաչյա Պողոսյանին հանձնելիս, կատակով նկատել էր, որ որեւէ իր տիեզերք ուղարկելը շատ ավելի հեշտ է, քան այնտեղից վերադարձնելը: Ուրեմն Չարենցի այս գիրքն իսկապես յուրահատուկ ճակատագիր ունեցավ՝ հասնել տիեզերք, վերադառնալ Երկիր եւ իր վրա կրել այդ ճանապարհը վավերացնող նշանը:

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը, շնորհակալություն հայտնելով Հրաչյա Պողոսյանին, ընդգծեց, որ 2027 թվականին նշվելու է մեծ բանաստեղծի ծննդյան 130-ամյակը, եւ տիեզերքից վերադարձած բացառիկ ժողովածուն իր առանձնահատուկ տեղը կունենա թանգարանի ցուցադրությունում:

Սակայն Չարենցի տուն-թանգարանի եւ Հրաչյա Պողոսյանի բարեկամությունը այս պատմությամբ չէր սկսվել: Դեռեւս բանաստեղծի ծննդյան 125-ամյակի առթիվ նա թանգարանին էր նվիրել Հայաստանի ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանի վրձնած Չարենցի դիմանկարը, որն այսօր ներկայացված է «Քարե Չարենց» ցուցադրությունում:

Այս ամենի մեջ, սակայն, ամենահետաքրքիրն այն գաղափարն է, որը միավորում է Հրաչյա Պողոսյանի՝ առաջին հայացքից միմյանցից այնքան տարբեր նախաձեռնությունները:

Նրա համար մշակութային ժառանգությունը միայն պահպանելու արժեք չէ: Այն պետք է ապրի: Ճանապարհ անցնի: Հասնի մարդկանց: Եվ եթե հնարավոր է՝ նույնիսկ հատի Երկրի սահմանները:

Չարենցի ժողովածուի տիեզերական ճանապարհորդությունն էլ պատահական դրվագ չէր Հրաչյա Պողոսյանի գործունեության մեջ:

Մեր հայրենակիցը երկար տարիներ բարեկամական ու գործնական կապեր ունի ռուս տիեզերագնացների հետ եւ Ռուսաստանի հյուսիսարեւմտյան տիեզերագնացության ֆեդերացիայի անդամ է: Տիեզերագնացության թեմայով նրա բազմաթիվ նախաձեռնությունների թվում են Կոնստանտին Ցիոլկովսկու կիսանդրու տեղադրումը, Ուգլեգորսկի տիեզերագնացության թանգարանի ցուցադրության համալրումն ու մեծ գիտնականին նվիրված վավերագրական ֆիլմի ստեղծումը: Նրա աջակցությամբ անցկացվել է նաեւ «Մենք Գալակտիկայի երեխաներն ենք» համառուսաստանյան մրցույթը՝ ավելի քան 1800 երեխաների մասնակցությամբ, որի եզրափակիչ փուլի մասնակիցները հնարավորություն են ստացել այցելելու «Վոստոչնի» տիեզերակայան:

Հրաչյա Պողոսյանի նախաձեռնությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի նաեւ Հայաստանի հետ կապված մեկ այլ խորհրդանշական պատմություն: 2017-ին նրա նախաձեռնությամբ եւ տիեզերագնացների աջակցությամբ Հայաստանի Հանրապետության եւ Երեւանի դրոշները տարվեցին տիեզերք: Նախաձեռնությունը նվիրված էր Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին եւ Երեւանի հիմնադրման 2800-ամյակին:

⇨8

Ի՞նչն է ներկայիս խոչընդոտում TRIPP-ի գործարկումը

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

TRIPP-ի նախագիծը, նրա շինարարական հեռանկարները, հնարավոր մարտահրավերներն ու գործարկման ժամանակացույցը, ինչպես նաեւ նրա հետ կապված քաղաքական եւ տնտեսական հարցերը շարունակում են մնալ Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ մասնագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, քննարկումների ընդհանուր փաթեթում ամենակարեւոր հարցն այն է, թե ինչ պայմաններ, գործընթացներ կամ տարածաշրջանային դերակատարներ կարող են խոչընդոտել այդ ծրագրի՝ TRIPP-ի գործարկումը:

TRIPP-ը սոսկ տնտեսական նախագիծ չէ: Այն կարող է դառնալ ռազմավարականորեն նշանակալից ամերիկյան ներկայություն Հարավային Կովկասում՝ իրար միացնելով ոչ միայն Հայաստանն ու Ադրբեջանը, այլեւ հնարավոր կապ ստեղծելով նաեւ Կենտրոնական Ասիայի ու Եվրոպայի միջեւ, ինտեգրված լոգիստիկ մի ցանցի միջոցով, որի երթուղիները անցնում են Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքներով:

Նման զարգացումը էականորեն կփոխի Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի ու Եվրոպայի լոգիստիկ կառուցվածքը: Սա հասկանալի է ինչպես **Թրամփի** վարչակազմի, այնպես էլ Ռուսաստանի եւ Իրանի նման տարածաշրջանային դերակատարների կողմից, որոնց համար որեւէ ձեւաչափի ամերիկյան ռազմավարական ներկայություն իրենց սահմանների կամ հարեւան երկրների սահմանների մոտ՝ հակասում է իրենց շահերին: Այս առումով ամեն ջանք գործադրվում է, որպեսզի Վաշինգտոնը չկարողանա ռազմավարական հենակետ հաստատել Հարավային Կովկասում:

Ակնհայտ է, որ քանի շարունակվում է հակամարտությունը Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ, եւ երկու կողմերը հրթիռներ են արձակում ոչ միայն ռազմավարական նշանակության օբյեկտների վրա, այլեւ Մ. Նահանգների հետ ենթադրաբար կապ ունեցող ամբողջ Միջին Արեւելքի երկայնքով տեղակայված տնտեսապես ռազմավարական ենթակառուցվածքների վրա, TRIPP-ը դառնալու է Իրանի գլխավոր թիրախը: Այս տեսանկյունից դիտարկված, կարեւոր է, որ TRIPP-ը առայժմ գոյություն չունենա: Նույնքան կարեւոր է, որ այդ ծրագիրը իրականանա առնվազն այնպիսի մի ժամանակահատվածում, երբ Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ անմիջական ռազմական հակամարտությունը կա՛մ լուծված կլինի, կա՛մ էլ բացառված: Իրանը արդեն բավական ժամանակ է ինչ միջոցներ է որոնում, որ խոչընդոտի այդ ծրագրի գործարկումը: Բայց նույնիսկ եթե Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ ռազմական ակտիվ թշնամանքը վերանա, TRIPP-ը շարունակելու է մնալ երկու կողմերի ռազմավարական եւ ռազմական մրցակցության ավելի լայն կոնտեքստում:

Կան նաեւ հարցեր կապված ռուսական շահերի հետ, ոչ անպայմանորեն նրա ռազմական ներկայության, այլ Հարավային Կովկասում նրա տնտեսական ներգրավվածության առումով: Գլխավոր հարցը առնչվում է ռուսական երկաթուղիների ցանցի եւ հայկական երկաթուղու համակարգի հետ, որի կառավարումը Ռուսաստանին է վերապահված: Ռուսական երկաթուղիները փաստացի ծառայում են որպես Հայաստանում Հարավային Կովկասի երկաթուղու արտոնյալ պայմաններում գործող օպերատոր: Օրեր առաջ ռուսական երկաթուղիների գլխավոր գործադիր տնօրեն **Օլեգ Բելոզիորովը** հարցազրույցներից մեկում նշեց, որ ռուսական երկաթուղիները (RZD) լիովին կատարում է իր բոլոր պարտականությունները՝ համաձայն Հայաստանի հետ կնքված արտոնյալ պայմանագրի: Նա նաեւ ընդգծեց, որ Հարավային Կովկասի երկաթուղին Հայաստանի ամենամեծ եւ ամենակարեւոր գործատուներից մեկն է: Ըստ նրա 2008-ից 2025 թվականները RZD-ի եւ ընկերության անձնական միջոցներից ներդրումների ընդհանուր քանակը կազմել է մոտավորապես 396.3 միլիոն ամերիկյան դոլար: Ռուսաստանը այս գումարը կարող է պահանջել Հայաստանից որպես փոխհատուցում, եթե Հայաստանը որոշի ետ վերցնել կամ չեղարկել արտոնյալ պայմաններով գործելու պայմանագիրը:

Նման պահանջը ֆինանսական ծանր բեռ կհանդիսանա Հայաստանի համար: Հարցն այստեղ այն չէ, որ Ռուսաստանը ցանկանում է հրաժարվել արտոնյալ կառավարման իր իրավունքներից, այլ այն, որ նա փորձում է ինչ-որ ձեւով մասնաբաժին ունենալ կամ ապահովել TRIPP-ի ծրագրում, որովհետեւ այդ ծրագրի գործարկումը զգալիորեն նվազեցնելու է Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության ոլորտը, եւ սա Մոսկվան շատ լավ գիտակցում է:

Տնտեսագետներից ոմանք պնդում են, որ այս ծրագիրը կարեւոր է Հայաստանի համար ոչ այնքան տնտեսական առումով, այլ հատկապես ռազմավարական տեսակետից, քանի որ այն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու լայն հնարավորություն է ընձեռելու: Դա, ինչ խոսք, իր հերթին ներառելու է հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական սահմանների հնարավոր բացումը եւ օգտագործումը, ինչը կարեւոր ազդակ է դառնալու ՀՀ տնտեսության հետագա զարգացման համար:

Այնպես որ, մենք դարձյալ գալիս ենք այն եզրահանգմանը, որ TRIPP-ը ոչ այնքան բիզնես նախաձեռնություն է, որքան ռազմավարական մի նախագիծ, որը կարող է ռազմավարական նշանակություն ունենալ Մ. Նահանգների հարավ-կովկասյան ներկայության համար, ինչը հիմնովին կփոխի այս տարածաշրջանի լոգիստիկ կառուցվածքը:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)
Օգոստոսի 2, 2026 թ.

Դժվար է ղեկավար լինելը, երբ ֆեզ չեն հարգում

Թրամփը՝ մեկ մարդ, որն ավեր է սփռում ու քաոս ստեղծում

Արտասահմանյան մամուլի առավել ուշագրավ հրապարակումների թարգմանության ռուսական ԻնոՍՄԻ կայքը նման վերնագրերով ներկայացրել է բրիտանական «Գարդիան» պարբերականի հուլիսյան մի հոդված այն մասին, թե իրանյան արկածախնդրությունը ԱՄՆ-ին զրկում է հեղինակությունից ու ազդեցությունից: Պահպանված որոշ դադարից հետո ռմբակոծությունների վերսկսումը, ըստ այդմ, ցույց է տալիս, որ նախագահը ԱՄՆ-ին ներքաշել է անվերջանալի արկածախնդրության, իսկ մնացած ամբողջ աշխարհը՝ տնտեսական ճգնաժամի մեջ:

«**Դոնալդ Թրամփը** խնդիրների մեջ է խրվել Իրանում՝ անզոր եւ շփոթված,- գրում է հոդվածի հեղինակը:- Իր իսկ սանձազերծած պատերազմից դուրս գալու ոչ մի ելք չի երեւում: Ամերիկացի զինվորականները նորից հարվածներ են հասցնում այդ երկրին, եւ ավելի ու ավելի հաճախ՝ քաղաքացիական ենթակառուցվածքներին: Ինչպես եւ նախկինում, այս անօրինական կոտորածը միայն կոփում է իր քաղաքացիների տառապանքների նկատմամբ անտարբեր ռեժիմը: Քանի՞ անգամ են Թրամփը եւ Պենտագոնի «ոսկորների տիրակալ» **Փիթ Հեգսեթը** տոնել կարծեցյալ հաղթանակը: Այդ շաբաթ նախագահը հայտարարեց, թե «խոշոր հաղթանակ» է տանում: Ոչ ոք նրան չի հավատում: Սրան հետեւող աշխարհը, արդեն հաշվարկելով պարսկաստանյան արկածախնդրության պատճառած հսկայական մարդկային եւ տնտեսական կորուստները, կարող է միայն ծաղրել ամերիկյան անզորությունը»:

Հորմուզի նեղուցի վերահսկողությունը, որը փակվել էր Թրամփի ռազմատենչ քաղաքականության պատճառով, դարձել է Սպիտակ տան համար սահմանափակ եւ գրեթե անհասանելի նպատակ, ասվում է հոդվածում: Ամերիկա-իսրայելական արշավի ավելի լայն նպատակները՝ Իրանի միջուկային ծրագրի վերացում, տարածաշրջանային պրոքսի-խմբավորումների տապալում, վարչակազմի փոփոխություն, այսօր պակաս իրագործելի են, քան երբեւէ: Ամերիկյան զինվորականներն անզոր են ոչ թե Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի, այլ Թրամփի երկչոտ ղեկավարման պատճառով: Եթե Իրանն իսկապես ներկայացնում է այն գոյութենական սպառնալիքը, որ պնդում է նախագահը, տրամաբանական քայլը կլիներ լայնածավալ ներխուժումը: Երբ **Ջորջ Բուշ կրտսերը** կարծեց, որ Իրաքը անընդունելի վտանգ է ներկայացնում, նա ներխուժեց 170 հազար զինվորով: Դա աղետ էր: Բայց Բուշը գոնե ուներ այդ քաջությունը: Թրամփն իր «ոսկրային խթաններով» չի համարձակվի նման բան անել Իրանում, եւ դրա համար աշխարհն, անկասկած, պետք է շնորհակալ լինի: Բայց նա նաեւ հրաժարվում է ընդունել իր սխալը՝ անխոհեմ պատերազմ սկսելը, որին չի կարող վերջ դնել: Նա նախընտրում է անվերջանալի եւ անհեռանկար հյուծող պատերազմում վտանգի ենթարկել քաղաքացիական անձանց ու զինվորականներին, հարվածի ենթարկել Պարսից ծոցի արաբ դաշնակիցներին, վնաս պատճառել համաշխարհային տնտեսությանը, առաջացնել աղետալի սով զարգացող երկրներում, խաթարել միջազգային իրավունքը եւ ոչնչացնել Հանրապետական կուսակցության ընտրական հեռանկարները, միայն թե չընդունի սեփական սխալը եւ չփնտրի դիվանագիտական լուծում փակուղի մտած «խաղաղության բանակցությունների» միջոցով:

Աշխարհի ամենամեծ թշնամին, նկատում է հոդվածագիրը, Իրանը չէ, այլ Դոնալդ Թրամփի ինքնասիրահարվածությունը: Հենց նա է հիմնական պատճառը, որ այս պատերազմը կրկին դուրս է գալիս վերահսկողությունից: Նա զանգվածային ոչնչացման զենք է՝ ի դեմս մեկ անձի:

Այս ամենը, ինչպես նշվում է, արդեն տեղի է ունեցել: Թրամփը պատերազմ է սկսել առանց Կոնգրեսի հաստատման, առանց իր դաշնակիցների աջակցության, առանց ամերիկյան ժողովրդի համաձայնության: Նա ո՛չ հստակ ծրագիր ուներ, ո՛չ էլ երկարաժամկետ ռազմավարություն: Նա հավատ էր ընծայել արագ հաղթանակի կասկածելի խոստումներին՝ նույնքան կասկածելի Իսրայելի վարչապետի կողմից: Փորձագիտական գնահատականները, որոնք, ըստ լուրերի, նա անտեսել էր, չէին սասանել ռազմական եւ տարածաշրջանային ռիսկերից նրա խոր անտեղյակությունը: Ապշեցուցիչ է, բայց Թրամփը սպասում էր, որ Իրանը կհանձնվի նեղուցի փակվելուց առաջ եւ «ցնցվել էր» Պարսից ծոցի ամերիկյան բազաների վրա պատասխան հարվածներից: Այժմ նա լիակատար շփոթմունք է ապրում:

Թրամփի պարադոքսը, համաձայն հրապարակման եզրակացության, խնդիր է, որը ամերիկացի ժողովուրդը պետք է լուծի: Հենց ամերիկացիներն են նրան ընտրել: Հենց նրանք են աշխարհին պարտադրել այս վտանգավոր անձը (մենք բառը մեղմեցինք - **Գ. Մ.**): Եվ

հենց նրանք են, հավանաբար, վճարելու նրա կործանարար քաղաքականության ամենաբարձր գինը:

«Ինչպես եւ Թոմաս Ջեֆերսոնն ու Հիմնադիր հայրերը 1776 թվականին,- ասում է հոդվածագիրը,- մենք՝ աշխարհի ժողովուրդը, ինքնին ակնհայտ ենք համարում հետեւյալ ճշմարտությունները. Թրամփը Ամերիկան չի դարձնում մեծ, նա այն դարձնում է պակաս նշանակալի, ավելի մանրոգի, դժբախտ, մասնատված, մեկուսացված եւ չսիրված: Շտապ հարկավոր է Թրամփից անկախության 2026 թվականի հռչակագիր»:

Ի դեպ, բրիտանական «Ֆայնենշըլ թայմս»-ն էլ ամսույս սկզբին, հղում անելով իր աղբյուրներին, նկատել է, թե այս հակամարտության մեջ Իրանը խլել է նախաձեռնությունը եւ Վաշինգտոնին ստիպում է կռվել Թեհրանի պարտադրած տեմպով: Միջազգային հարաբերությունների գծով Եվրոպական միության վերլուծաբան **Էլլի Գերամայեի** կարծիքով, որը բերում է լրատվամիջոցը, Իրանը գիտակցել է թշնամու հետ լայնածավալ ռազմական գործողությունների վերադառնալու անխուսափելիությունը: Այդ պատճառով, հավելել է նա, Թեհրանը բացահայտ ցուցադրում է իր կարողությունները՝ ազդանշան հղելով, որ «չնայած ԱՄՆ-ը եւ Իսրայելը սկսեցին այս պատերազմը, նրանք չեն լինի որոշող կողմը, թե այն ինչպես կավարտվի»:

Գ. Մ.

Մի քաղաք տեսա գազել-ների «սիրահար»

Գյումրին արժանավայել հանրային տրանսպորտի խնդիր ունի

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Հուլիսին, ըստ պաշտոնական տեղեկատվության, վարչապետ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է Երեւան եւ Գյումրի քաղաքներում ՀՀ կառավարության ներդրումային առաջնահերթությունների պլանը: Մասնավորապես՝ ներկայացվել են առաջնային լուծում պահանջող խնդիրները, որոնք ունեն կառավարության ֆինանսական կամ ինստիտուցիոնալ աջակցության կարիքը: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանն ու մասնավորապես Շիրակի մարզպետարանին հանձնարարվել է համատեղ աշխատանք կատարել՝ ուղղված ծրագրերի կոնկրետացմանն ու խնդիրների առավել արդյունավետ լուծմանը:

Գյումրիում, ինչպես եւ գուցե այլուր, խնդիրները շատ են, այստեղ դրանք իրենց առանձնահատկություններն ունեն: Քաղաքում նախատեսվող, հիշյալ տեղեկատվության մեջ նշված առաջնահերթությունների կողքին,- անհրաժեշտ ենք համարում հիշեցնել,- հրամայական լուծում պահանջող է այստեղ նաեւ երկրի երկրորդ մեծ քաղաքին վայել արժանապատիվ ու հարմար հասարակական տրանսպորտ ունենալու խնդիրը:

Այն ծագել է ու այդպես էլ հիմնավոր լուծում չի ստանում 1988-ի աղետալի երկրաշարժից ի վեր, երբ մինչ այդ տեղիս երթուղիներում աշխատող հիմնականում «ԼԱԶ» ավտոբուսները, չնչին բացառություններով, վերացան քաղաքի փողոցներից ու այդպես էլ չվերադարձան. քաղաքային տրանսպորտը որոշ ժամանակ պարզապես կանգ առավ: Հետո ողջ ծանրությունն իրենց վրա վերցրին արդեն բավական «ծեր» տրոլեյբուսները, որոնք Շիրակի ցրտաշունչ ձմռանը չմաքրվող սառույցի հաստ շերտով պատած փողոցներով, մինչեւ դռներից կախված ուղեւորների մեծ ծանրության տակ մի կերպ սողալով պարզապես անգնահատելի հերոսական աշխատանք էին կատարում, արդեն նույնիսկ երկարացված ցանցով հասնելով մինչեւ հետերկրաշարժյան նորակառույց «Անի» թաղամաս... Հետո քիչ-քիչ առաջ եկան եւ ուղեգծեր մտան նորահայտ սեփականատերերի համեմատաբար փոքր «ՊԱԶ» ավտոբուսները, որոնց վարորդներն էլ շուտով, ուղեւորահոսքին տիրանալու համար սկսեցին նեղել, օրվա հատկապես որոշակի ժամերի արհեստականորեն սահմանափակել տրոլեյբուսների երթեւեկի հնարավորությունը: Ապա 2004-2006 թվականներին՝ **Ռոբերտ Քոչարյանի** իշխանության օրոք, կատարվեց աներեւակայելին. նաեւ արտաքուստ արհեստականորեն ստեղծված պատճառներով մայրաքաղաքում ապամոնտաժվեց եւ վերացվեց տրամվայի, Գյումրիում՝ 1960-ականներին այնպես գորովանքով, մեծ ծախսերով ու ջանքերով ստեղծված տրոլեյբուսային ցանցը: Իսկ երբ հետո ավտոբուսային պարկը գնած քաղաքապետարանը երթուղիներից հետզհետե դուրս մղեց նշված առանց այն էլ արդեն հնացող ու հին ավտոբուսները եւս, քաղաքի ուղեւորը մնաց նոր ծլած «գծատերերի» մենաշնորհային դարձած «Գազել» միկրոավտոբուսների հույսին...

Քաղաքի իրական հասարակական տրանսպորտի վերականգնման մի ոգեւորիչ փորձը եղած, քաղաքապետ **Սամվել Բալասանյանի** օրոք 2013-ին բերված եւ երկու երթուղիներում աշխատել սկսած չինական 16 նոր ավտոբուսներն էլ ժամանակ անց մաշվեցին ու ըստ հայտարարվածի՝ տեխնիկական վատ վիճակի պատճառով դադարեցին շահագործվելուց... 2021-ին քաղաքապետարանը ՀՀ կառավարության հետ համատեղ ծրագրով ձեռք բերեց կարծեմ 63 նոր «Գազել» միկրոավտոբուսներ, որոնք պարզապես փոխարինեցին իրենց հնացած նախորդներին: Ու հիմա իր կարեւորությամբ հանրապետության երկրորդ քաղաքն ընդամենը այդ գազելների հույսին է, հասարակական տրանսպորտից օգտվող մարդիկ ամեն օր երթեւեկում են այդ անձուկ մետաղե տուփերի մեջ կուչ եկած... Եվ անգամ ինչ-որ միջազգային ծրագրով տարիներ խոստացված 4 թե 5 էլեկտրական ավտոբուսների երեսն իսկ այդպես էլ չտեսանք: Ու այսպես ստացվում է, որ ավելի շատ՝ ուղեւորներն են հարմարեցվում, ծառայում մեքենատերերի շահերին, մինչդեռ հասարակական տրանսպորտի բուն նպատակն ու տրամաբանությունը հակառակն է թելադրում:

Թվում է՝ այս պատկերը ոչ միայն հարիր չէ 21-րդ դարի քաղաքին, նվաստացուցիչ ու անհարմար է նման կարգի բնակավայրի ուղեւորի համար, այլեւ նսեմացնում է քաղաքի դեմքը նրա հյուրերի աչքում էլ, երբ գնալով նաեւ մեծանում է այստեղ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին զբոսաշրջային հոսքը:

Գյումրին ավտոբուսային ցանցի վերականգնման էական խնդիր ունի: Թե այս քաղաքին հարմար ինչ չափի եւ ինչ ավտոբուսներով դա հարմար կլինի, այդ արդեն երկրորդ հարցը կարող է լինել:

Առաջադրվող այլ խնդիրներ

Գյումրիում նախատեսվող առաջնահերթությունների պլանը ներառում է, մասնավորապես, 24-ժամյա ջրամատակարարման բարելավում, զբոսաշրջային կլաստերի ստեղծման շրջանակում իրականացված մոտ 6.6 մլրդ. դրամից բացի եւս 16,5 մլն դոլարի ներդրում, որի մասով առաջարկվում է ծրագրում ներառել Հաղթանակի զբոսայգու, կենտրոնական շուկայի եւ Մանուշյան փողոցում գտնվող շատրվանի հիմնանորոգման ծրագրերը: Մյուսը վերաբերում է տնակների հարցի վերջնական լուծմանը: Ըստ ներկայացված տվյալների, այժմ Գյումրիում առկա է 2465 տնակ: Նախնական գնահատականներով՝ դրանցում բնակվող մոտ 596 ընտանիքի նկատմամբ կառավարությունն ունի «այս կամ այն ձեւով» փոխհատուցման պարտավորություն: Ծրագրերի ցանկում են Գյումրիում տարեկան 25 կմ ճանապարհաշինական աշխատանքները: Քաղաքի 180 կմ ճանապարհներից նախկինում հիմնանորոգվել է 70 կմ-ը, իսկ մնացած 110 կմ-ը խիստ անբարեկարգ վիճակում է: Անդրադարձ կա առկա վթարային շենքերի (դրանք շատ են, թեեւ նշված է «մի քանիսը»), Ալեք Մանուկյան փողոցի՝ քաղաքի երկու բանուկ մասերն իրար կապող խիստ կարեւոր կամուրջի նորոգման, Գյումրու ավտոկայանի կառուցման խնդիրներին:

Հրաչյա Պողոսյան. մարդ, որը շաղկապում է անցյալն ու ներկան՝ հանուն ապագայի

⇨1 Այդ դրոշները նույնպես վերադարձան Երկիր: Եվ այդ պահին տիեզերքն ու հայրենիքը մի պահ դարձան նույն պատմության երկու կետերը:

Թերեւս հենց այսպիսի նախաձեռնություններն են լավագույնս բնորոշում Հրաչյա Պողոսյանին: Նրա համար բարեգործությունը միայն օգնություն տրամադրելը չէ: Այն երբեմն հուշարձան է, երբեմն՝ թանգարան, երբեմն՝ գիրք, երբեմն՝ դպրոցական երեխային տրված հնարավորություն՝ տեսնելու մի աշխարհ, որի մասին մինչ այդ միայն երազել է:

Իսկ երբեմն՝ հայկական դրոշ է տիեզերքում: Կամ Չարենցի գիրք՝ աստղերին ավելի մոտ:

Հրաչյա Պողոսյանի գործունեության մեջ կա եւս մեկ կարեւոր առանձնահատկություն: Նրա բարեգործությունը աշխարհագրական սահմաններ չի ճանաչում: Հայաստանից մինչեւ Ռուսաստան, պատմական հիշողությունից մինչեւ կրթություն, մշակույթից մինչեւ հոգեւոր կյանք՝ նրա իրականացրած հարյուրավոր ծրագրերը տարբեր են իրենց բնույթով, բայց միավորվում են մեկ պարզ սկզբունքով՝ անել մի բան, որը կմնա մարդկանցից հետո:

Հենց այդ պատճառով էլ նրա բարեգործությունը հաճախ չի ավարտվում որեւէ մեկին օգնություն ցուցաբերելով: Այն փորձում է ստեղծել շարունակություն:

Հուշարձանը մնում է: Գիրքը մնում է: Թանգարանը մնում է: Հիշողությունը մնում է:

Օգոստոսի 11-ին Հրաչյա Պողոսյանը նշում է ծննդյան 56-րդ տարեդարձը:

56 տարին մարդու կյանքում տարիք է, երբ արդեն կարելի է հետ նայել անցած ճանապարհին:

Իսկ երբ Հրաչյա Պողոսյանն է հետ նայում, այդ ճանապարհի տարբեր հանգրվաններում կանգնած են հուշարձաններ, բացված թանգարաններ, հրատարակված գրքեր, պահպանված անուններ, վերականգնված պատմություններ եւ հազարավոր մարդիկ, որոնց կյանքում նրա արած գործը որեւէ հետք է թողել: Բայց, թերեւս, նրա մասին ամենակարեւորն այն է, որ նա դեռ շարունակում է առաջ նայել:

«**ԱԶԳ**» թերթի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է իր վաղեմի եւ սիրելի բարեկամ, ճանաչված բարերար եւ հասարակական գործիչ Հրաչյա Միսակի Պողոսյանին ծննդյան 56-րդ տարեդարձի առթիվ՝ մաղթելով քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, անսպառ եռանդ եւ երկար տարիների բեղմնավոր գործունեություն:

Թող դեռ շատ լինեն նրա նախաձեռնությամբ վերականգնվող հիշողությունները, հայրենիք վերադարձող անունները, ծնվող գաղափարներն ու այն բարի գործերը, որոնցից աշխարհը գուցե միանգամից չի փոխվում, բայց անպայման դառնում է մի փոքր ավելի մարդկային:

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ Հրաչյա Պողոսյան:

Թող Ձեր արած բարին միշտ վերադառնա Ձեզ՝ մարդկանց երախտագիտությամբ, հայրենիքի սիրով եւ այն լուսավոր հետքով, որը թողնում եք Ձեր անցած ճանապարհին:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով,,առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են,համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի::
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 06.08.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: